«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի հենակետային բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԵՀԲՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է ԵՀԲՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՀԲՔ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 19

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 22

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 34

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 40

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 45

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 49

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 54

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 57

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 62

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 67

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 74

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 78

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի հենակետային բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում: Քոլեջը բժշկական ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում: Քոլեջում առկա են «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունները, իսկ շրջանավարտները ստանում են համապատասխանաբար բուժքրոջ/բուժեղբոր, մանկաբարձի, դեղագործի, ատամնատեխնիկի և բուժքույր/բուժեղբայր-կոսմետոլոգի որակավորում: «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունը ներդրվել է վերջերս՝ աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրության հիման վրա: Հարկ է նշել, որ քոլեջը մոդուլային ուսուցման է անցել 2013 թ.–ից: Տեղայանացվել և քոլեջի Խորհրդի կողմից հաստատվել են ՄԿԾ–ների նկարագրերը և իրականացման պայմանների նկատմամբ պահանջները: ՊԿՉ-ներին համապատասխան՝ կատարվել են ծրագրային փոփոխություններ, ամբիոնների կողմից տեղայնացվել են մոդուլային ծրագրերը, մշակվել են օրինակելի ուսումնական պլաններ, ստեղծվել են ուսումնական ձեռնարկներ, բաժանողական նյութեր: Ծրագրային փոփոխությունները կատարելիս հաշվի են առնվել գործատուների առաջարկությունները:

ՄԿԾ–ների համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման նպատակով քոլեջի կողմից մշակվել են ընթացակարգեր, սակայն հիմնականում համեմատական վերլուծություններ են արվել ՀՀ սակավաթիվ քոլեջների և Բիշքեկի բժշկական քոլեջի հետ, որոնց հիման վրա որոշվել է «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության օրինակով սիմուլյացիոն կաբինետ ունենալ նաև «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության համար: Կրթական ծրագրերի այլ համեմատական վերլուծություններ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնող արտասահմանյան քոլեջների հետ առկա չեն: Չնայած նրան, որ քոլեջը ռազմավարական նպատակներին համահունչ կարևորում է շարժունության և միջազգայնացման հարցերը, սակայն այս ուղղությամբ ակտիվ գործողություններ չեն ծավալվում. ուսանողների և անձնակազմի շարժունության ընդլայնմանը և միջազգայնացմանը խոչընդոտում են սակավ ֆինանսական միջոցները, օտար լեզուների ոչ բավարար իմացությունը, նաև անձնակազմի նախաձեռնողականության պակասը:

ՄԿԾ–ներում առկա են որոշակի մեխանիզմներ, որոնք ուղղված են ուսանողների հետազոտական/վերլուծական մտածողության զարգացմանը՝ սեփական և գործընկեր հաստատությունների ռեսուրսների օգտագործմամբ: Հետազոտական աշխատանքներ են կատարվում մոդուլների լաբորատոր և գործնական դասերի, ինչպես նաև պրակտիկաների ընթացքում՝ ռեֆերատների, ստենդների, իրավիճակային խնդիրների և այլ մոտեցումների կիրառմամբ:

Քոլեջն իր առաքելության և նախանշված նպատակների իրականացման համար ունի անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ. համապատասխան շենքային պայմաններ՝ լսարաններ, առարկայական կաբինետ-լաբորատորիաներ, մասնագիտական և համակարգչային կաբինետներ, մարզադահլիճ/մարզահրապարակ, գրադարան, ընթերցասրահ և այլն: Գործող գրադարանում պարբերաբար իրականացվում է գրքերի թարմացում, և նախատեսում է նաև թվայնացնել առկա գրադարանային ֆոնդը, սակայն դրա իրականացման համար պայմաններ դեռևս ստեղծված չեն: Բավարար քանակով մուլյաժներով և դասավանդման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներով քոլեջը հասնում է կրթական ծրագրերով նախանշված նպատակներին: Մասնագիտական պրակտիկայի իրականացման համար օգտագործվում են նաև գործընկեր հաստատությունների (կլինիկաներ, գիտահետազոտական կենտրոններ և այլն) ռեսուրսները: Այնուամենայնիվ, քոլեջի լաբորատորիաների որոշակի սարքերով/պարագաներով հագեցվածության թարմացումը կնպաստեր սեփական ռեսուրսների օգտագործմամբ տարբեր մոդուլներում նոր մեթոդների ներդրմանը, որն էլ հնարավորություն կստեղծեր ուսանողների լաբորատոր-հետազոտական աշխատանքների բազմազանեցման համար: Պարբերաբար ֆինանսական միջոցներ են տրամադրվում շենքային պայմանների բարելավման, ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար:

Քոլեջը 2018թ.-ից փոխվել է իրավակազմակերպական ձևը, և ՊՈԱԿ-ից դարձել 100% պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերություն: Սակայն, իրավակազմակերպական ձևի փոփոխությունը դեռևս չի հանգեցրել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմանը: Դեռևս թերի են ներառական կրթության զարգացման և սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց լիարժեք ներգրավմանն ուղղված պայմանները, սակայն առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Քոլեջի ՄԿԾ–ների իրականցման համար առկա է համապատասխան որակավորումներով արհեստավարժ դասախոսական կազմ: Դասախոսական կազմի մոտ 80%–ը քոլեջի հիմնական աշխատողներն են: Քոլեջը իր ռազմավարությանը համահունչ ձգտում է իրականացնել դասախոսական կազմի որակի բարձրացում՝ համալրելով քոլեջի կազմը երիտասարդ կադրերով, լավագույն աշխատակիցներին խրախուսելով: Քոլեջի 2018-2023 թթ. զարգացման ՌԾ–ում որպես նախագիծ սահմանված է որակավորված, նվիրված և մարդկային բարձր հատկանիշներով օժտված դասավանդողների պատրաստումը առողջապահության համակարգի աշխատաշուկան միջին օղակի որակյալ մասնագետներով ապահովելու համար, բարձրորակ մասնագետ դասախոսների ներգրավումը, իսկ զարգացման ծրագրում պլանավորված են այդ ուղղությամբ գործողություններ: Նաև իր ռազմավարական նպատակներին համահունչ ձգտում է

որակյալ կրթության տրամադրել՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Սակայն դիտվում է միջազգային ծրագրերի մասնակցության թույլ նախաձեռնողականություն և մասնագիտական վերապատրաստումների սակավություն: Միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնմանը խոչընդոտ են հանդիսանում օտար լեզվի, մասնավորապես անգլերենի ոչ լիարժեք տիրապետումը և սակավաթիվ ֆինանսական միջոցները: Այնուամենայնիվ, քոլեջի դասախոսների կողմից իրենց մասնագիտական գիտելիքների զարգացման, մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների մասնակցության պատրաստակամությունը, քոլեջի կողմից դասավանդող կազմի գործունեության տարբեր խրախուսումները, կատարելագործման որոշակի ձեռնարկվող միջոցառումները, անձնակազմին մշտական աջակցությունը մասամբ հիմք են հանդիսանում դասավանդման որակի շարունակական բարելավման համար: Դասախոսների կողմից պարբերաբար տպագրվում են դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ քոլեջն ունի իր առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին համահունչ կրթական ծրագրեր, համապատասխան որակավորմամբ և մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսական կազմ, շարունակաբար բարելավում է իր ենթակառուցվածքներն ու ռեսուրսները կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար, ինչպես նաև կիրառում է գործընկեր կազմակերպությունների բազաները ուսանողների գործնական հմտություններն ապահովելու նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

ԵՀԲՔ առաքելության ձևակերպումը տրված է քոլեջի եռամյա միջնաժամկետ (2020-2023թթ.) զարգացման պլանում, հնգամյա ՌԾ-ում քոլեջի առաքելության որպես առանձին բնորոշում տրված չէ: Քոլեջի գործունեության հիմնական առարկան կրթական ծառայությունների մատուցումն է միջին մասնագիտական բժշկական ոլորտում: Ընթացիկ հնգամյա ռազմավարական ծրագիրը կազմվել է 2018թ.–ին, որն իր ավարտին է մոտենում 2023թ.–ի երկրորդ կեսին: Քոլեջի կողմից կառավարման արդյունավետության բարձրացումը և որակյալ կադրային ներուժի զարգացումը առանձնացված է որպես զարգացման ռազմավարության գործառույթ, որի իրականացման համար մշակվել է գործողությունների մի ամբողջ շարք, որոնք արտացոլված են ՌԾ-ում: Քոլեջի կառավարման բարձրագույն մարմինը Խորհուրդն է, ընթացիկ կառավարումը կատարում է տնօրենը: Բացի տնօրենից, վարչական կազմում են նաև տնօրինական խորհուրդը և ուսումնական, վարչատնտեսական, ուսումնարտադրական աշխատանքների գծով փոխտնօրենները: Տնօրենը ընտրվում է հինգ տարի ժամկետով. ներկայիս տնօրենը պաշտոնավարում է 2018թ.–ից: Քոլեջի կառավարումն իրականացվում է «վերևից ներքև» և «ներքևից վերև» հաշվետվողականության սկզբունքներով, այդ երկու գործընթացների զուգակցմամբ. բոլոր ստորաբաժանումները իրենց գործունեությունը կազմակերպվում են համապատասխան գործող կանոնակարգերի: Կառավարման մարմիններում, հանձնաժողովներում ներգրավված են դասախոսները և ուսանողները: Պլանավորված են քոլեջի առաքելությանը ու նպատակներին համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ: Կարճաժամկետ պլանավորումը, որն ընթացիկ տարվա դասապրոցեսի պլանավորումն է, մշտապես դիտարկման ներքո է:

Միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումն ուղղորդվում է քոլեջի կողմից հաստատված զարգացման 2020-2023թթ. ծրագրով: Քոլեջն ունի եռամյա միջնաժամկետ Զարգացման և երկարաժամկետ հնգամյա Ռազմավարական ծրագրեր: Սակայն, որոշ դեպքերում Զարգացման ծրագրի գործողություններն ամբողջությամբ չեն ընդգրկում ՌԾ-ի կատարումը: Մասնավորապես, պլանավորված չեն կրթական ծրագրերի, միջազգայնացմանը, ուսանողների և անձնակազմի շարժունակությանը, դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներին և քոլեջի ձեռնարկատիրական գործունեությանն ուղղված հստակ գործողություններ:

Քոլեջի ղեկավար կազմը կարևորում է որակի ապահովման համակարգի ներդրումը: 2018-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրում որպես նախագիծ սահմանված է որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը և հզորացումը: 2021թ.-ից քոլեջում ներդրվել է որակի ապահովման պատասխանատուի հաստիքը, սակայն կրթության որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ներդրման փուլում: Որակի ապահովման գործընթացներն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով քոլեջում ստեղծվել են կրթության որակի ապահովման մասնագիտական հանձնաժողովներ: Որակի պատասխանատուի նախաձեռնությամբ մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնցից է «Որակի ներքին ապահովման վերանայման քաղաքականություն»-ը: Որպես քոլեջի գործընթացների գնահատման մեխանիզմներ նախանշվում են ներքին նոր չափանիշների, կանոնակարգերի, ընթացակարգերի ստեղծումը, իսկ որակի ապահովման համակարգի միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղությամբ հստակ քայլեր նախանշված և իրականացված չեն, ինչպես նաև իրականացված չէ միջազգային չափանիշների ուսումնասիրում և վերլուծություն: Որակի կենտրոնը դեռևս չունի առկա քաղաքականության և գործընթացների համակարգային գնահատման, որակական հետազոտություններ, վերլուծություններ և մեխանիզմներ, ինչպես նաև քոլեջի կողմից դեռևս հստակ տարանջատված չեն որակի ապահովման համակարգի առաջնահերթությունները:

Այսպիսով, փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջն իր առաքելությանը և սահմանած նպատակներին համահունչ ներդրել է կառավարման մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում ներքին և արտաքին շահակիցներին հանդես գալու իրենց վերաբերող առաջարկներով, գործում են հաշվետվողականության հստակ գործընթացներ, իսկ որակի ապահովման համակարգի ամբողջական ներդրումը և կարիքների վերհանման գործընթացների կանոնակարգումը կնպաստեն քոլեջում ընթացող գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջում կանոնակարգված կերպով իրականացվում է ուսանողների ընդունելությունը՝ «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պատասխանատուն աշխատակիցների, ուսանողների, նաև ՈՒԽ անդամների և շրջանավարտների հետ ուսանողների հավաքագրման նպատակով շրջում են Երևանի և մարզերի դպրոցներում, տրամադրում են բուկլետներ: Երբեմն էլ լրատվական միջոցներով լուսաբանվում է ընդունելության կարգը, մասնագիտությունների ցանկը, ուսման վարձաչափերը, պահանջվող փաստաթղթերը և այլն: Քոլեջի պաշտոնական կայքէջը գործարկվել է փորձագիտական այցի ընթացքում: Առկա են ուսանողների կարիքների վերհանման որոշ

մեխանիզմներ: Ուսանողները նաև ընդգրկված են կառավարման և տնօրինական խորհուրդներում և ունեն հնարավորություն խնդիրները վերհանելու, ինչպես նաև տարբեր առաջարկներ ներկայացնելու: Այս հարցում ակտիվ է նաև Ուսանողական խորհուրդը, որը սերտորեն համագործակցում է վարչական և ուսումնական ստորաբաժանումների հետ: Քոլեջում գործում են ուսանողների ֆինանսական և մասնագիտական աջակցության տարբեր մեխանիզմներ: Տարեցտարի ակտիվանում է ուսանողների կապը կարիերայի պատասխանատուի հետ: Կարիերայի կենտրոնը կազմակերպում է տարաբնույթ սեմինարներ՝ նվիրված աշխատաշուկայի պահանջներին և ուսանողների հմտությունների զարգացմանը: Քոլեջում առկա են ուսումնական գործընթացի հետազոտական/վերլուծական աշխատանքների հետ զուգակցման որոշ մեխանիզմներ:

Քոլեջն ունի հաշվետվողականության սահմանված կարգ: Առկա է վերից վար և վարից վեր հաշվետվողականություն, բոլոր օղակներում ներդրված են հաշվետվողականության մեխանիզմներ: Քոլեջի բոլոր ստորաբաժանումների ընթացիկ և տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմվում է տնօրենի տարեկան հաշվետվությունը: Հաշվետվություններ են ներկայացվում նաև ԿԳՄՍ նախարարությանը և պետական այլ գերատեսչություններին: Որպես տեղեկատվության հասանելիությունն ապահովող հարթակներ դիտարկվում են ֆեյսբուքյան էջը և նորաստեղծ պաշտոնական կայքէջը: Հասարակայնության հետ կապը ապահովվում է նաև քոլեջի մասին տեղեկատվության տարածմամբ «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնում և «Հայաստանի քոլեջները և արհեստագործական ուսումնարանները» տեղեկատու ձեռնարկում, տարաբնույթ էքսպոների մասնակցության և դպրոցներ այցելությունների միջոցով: Քոլեջն իրականացվում է խորհրդատվական հանդիպումներ ու քննարկումներ գործընկեր հաստատությունների ներգրավմամբ: Քոլեջի մշակված և տպագրված ուսումնամեթոդական ձեռնարկները ևս տրամադրվում են Հանրապետության միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատություններին, գրադարաններին: Այնուամենայնիվ, քոլեջի հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

Քոլեջը ձգտում է դառնալ միջին մասնագիտական բժշկական կրթական համակարգի տարածաշրջանային կենտրոն, և որպես խնդիր է սահմանել ինտեգրումը կրթության բնագավառի միջազգային զարգացումներին: Սակայն, քոլեջում դեռևս չեն գործում այդ նպատակին տանող ընթացակարգեր և պլանավորված հստակ գործողություններ: Քոլեջն ակտիվորեն համագործակցում է բազմաթիվ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ: Քոլեջում տարբեր մասնագիտությունների գծով սովորում են նաև օտարերկրյա քաղաքացիություն ունեցող հայազգի ուսանողներ: Այդուհանդերձ, միջազգային համագործակցության նախաձեռնողականության պակասը խոչընդոտում է նորանոր ծրագրերի իրականացումը, նոր կապերի հաստատումը և զարգացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի պատրաստակամությունը ուսումնական միջավայրի և ուսանողներին մատուցվող ծառայությունների շարունակական բարելավման գործում ու քոլեջի դերը հայաստանյան միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շարքում, և միևնույն ժամանակ գտնում է, որ միջազգայնացման գործընթացների կանոնակարգումը, նպատակադրումների

հստակեցումը և դրանց համահունչ ռեսուրսների տրամադրումը, նախաձեռնողականության ավելացումը քոլեջին հնարավորություն կտան հասնելու այս ուղղությամբ իր սահմանած նշաձողի հաղթահարմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ՊԿՉ-ներին համապատասխան ծրագրերով առողջապահության ոլորտի՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագիտությունների առկայությունը,
2. քոլեջի առաքելությանը և կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան արհեստավարժ դասախոսական, ուսումնաօժանդակ ու վարչական անձնակազմի առակայությունը,
3. ներքին և արտաքին հաշվետողականության համակարգի առկայությունը,
4. մասնագիտական կողմնորոշմանն ու կարիերայի ուղղորդմանն ուղղված քոլեջի քաղաքականությունը,
5. բավարար նյութատեխնիկական բազայի առկայությունը ուսումնական գործընթացը կազմակերպելու համար,
6. քոլեջի անձնակազմի կողմից մշակված դասագրքերի, ուսումնամեթոդական ուղեցույցների և ձեռնարկների հրատարակումը,
7. դասախոսական անձնակազմի միջին և երիտասարդ տարիքի աշխատակիցների և հիմնական աշխատակազմի շնորհիվ ձևավորված կայունությունը,
8. գործնական, լաբորատոր դասընթացների, պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման ընթացքում ուսանողների վերլուծական մտածողությունը զարգացնող մեխանիզմները,
9. քոլեջի հասարարական բարձր պատասխանատվությունը լավագույն փորձի փոխանակման ու գիտելիքների փոխանցման նպատակով,
10. ՀՀ ուսումնական հաստատությունների և գործատուների հետ համագործակցությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. անձնակազմի և ուսանողների օտար լեզուների իմացության ցածր մակարդակը,
2. դասախոսական կազմի մասնագիտական համակարգային վերապատրաստումների բացակայությունը,
3. քոլեջի հավակնոտ առաքելության և ռազմավարության իրականացման համար սակավաթիվ ֆինանսական ռեսուրսները,
4. միջազգային կազմակերպությունների հետ սակավաթիվ համագործակցությունը և անձնակազմի ու ուսանողների շարժունակության բացակայությունը,
5. դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը,
6. լրացուցիչ ֆինասական միջոցներ ներգրավելու նպատակով օրենսդրությամբ ընձեռնված ձեռնարկատիրական գործունեության չիրականացումը,
7. հատուկ կարիքներ ունեցող անձանց համար շենքային պայմանների բացակայությունը,

8. միջազգային այլ բժշկական քոլեջների հետ բենչմարքինգի իրականացման անկատարությունը,
9. արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող հատուկ ընթացակարգերի և պլանավորման բացակայությունը,
10. որակի ապահովման համակարգի անկատարությունը և դրա թույլ ազդեցությունը քոլեջում ընթացող գործընթացների բարելավման վրա:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներդնել Ռազմավարական ծրագրի գնահատման գործուն մեխանիզմներ հետագա պլանավորման ընթացքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:
2. Ներդնել միջազգային փորձի ուսումնասիրման, քոլեջի նպատակներից բխող միջազգայնացման խթանման գործիքակազմ:
3. Ներքին և արտաքին շահակիցներին ներգրավել նոր ՌԾ-ի մշակման աշխատանքներում:
4. Ներդնել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման բազմազանեցված մեխանիզմներ:

Կառավարումն ու վարչարարությունը

5. Նոր ՌԾ-ի մշակման հիմքում դնել նախորդ ՌԾ-ի գնահատման ամփոփումները:
6. Մշակել և ներդնել ֆինանսական վիճակի կայունության ապահովման գործուն մեխանիզմներ:
7. Ներդնել հաշվետվություններով դուրս բերված բարելավման ենթակա խնդիրները հաջորդ պլանավորումներում ներառելու գործուն մեխանիզմներ:
8. Կառավարչական գործընթացներում ամրապնդել բարելավում-գնահատում շղթայի արդյունավետ գործարկումը:
9. Բարելավել արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատման և տվյալների հավաքագրման մեխանիզմները:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Պլանավորել և իրականացնել բենչմարքինգ միջազգային նմանատիպ քոլեջների կրթական ծրագրերի հետ՝ նպաստելով ուսանողների և դասախոսների շարժունությանը:
11. Պլանավորել և կայուն ձևով իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ ներգրավելով արտաքին շահակիցների:

Ուսանողները

12. Ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման գործընթացները՝ պարբերաբար թարմացնելով նրանց մասին տվյալները:
13. Մշակել և ներդնել ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ բոլոր ոլորտներում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

14. Հստակ պլանավորել դասախոսների մասնագիտական զարգացման միջոցառումները՝ հիմնված բացահայտված կարիքների վրա:
15. Խրախուսել դասախոսներին ներգրավելու միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և տեղայնացման աշխատանքներում:

Հետազոտությունը և զարգացումը

16. Մշակել մոդուլների գործնական/լաբորատոր աշխատանքներում քոլեջի սեփական ռեսուրսներով իրականցվող իրական փորձարարական նոր մեթոդներ:
17. Մոդուլներում սահմանել հետազոտական նոր խնդիրներ՝ բոլոր ուսանողների ներգրավմամբ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

18. Ներդնել այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու մեխանիզմներ:
19. Ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացման միասնական համակարգ:
20. Սահմանել համապատասխան չափանիշներ և պահանջներ լաբորատորիաներից օգտվելիս ուսանողների անվտանգության ապահովման համար:

Հասարակական պատասխանատվությունը

21. Լիարժեք գործարկել քոլեջի պաշտոնական կայքը՝ տեղեկատվությունը հասանելի դարձնելով շահակիցների առավել լայն շրջանակների ինչպես հայերենով, այնպես էլ օտար լեզուներով:
22. Ներդնել ԵՀԲՔ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

23. Ստեղծել միջազգայնացման հարցերի համար պատասխանատու ենթակառուցվածք կամ իրականացնել պատասխանատվության հստակ տարանջատում՝ գործընթացների արդյունավետ իրականացման համար:
24. Սահմանել միջազգայնացման ուղղությամբ ժամկետների և ռեսուրսների տեսանկյունից իրատեսական նպատակներ և խնդիրներ, ներդնել դրանց իրականացման համար հստակ ընթացակարգեր և կատարողականների չափելի ցուցանիշներ, ապահովել պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլի իրականացումը:
25. Ներդնել գործիքակազմ միջազգային կապերի հաստատման և շարունակական զարգացման ուղղությամբ:
26. Առավել ակտիվ և նախաձեռնողական քայլեր իրականացնել ինչպես միջազգային համագործակցության հնարավորությունների որոնման, այնպես էլ դրանց իրականացման համար դրամաշնորհների կամ ֆինանսավորման այլընտրանքային այլ աղբյուրների հայթայթման ուղղությամբ:

27. Ընդլայնել անձնակազմի և սովորողների համար անգլերենի իմացության մակարդակը բարձրացնող հնարավորությունները:

Որակի ներքին ապահովման համակարգը

28. Հստակեցնել որակի ապահովման համակարգի առաքելությունը, նպատակը և գործառույթների շրջանակը՝ համապատասխանեցնելով որակի ներքին ապահովման առանձնահատկություններին, հիմքեր ստեղծել որակի մշակույթի միասնական համակարգի ձևավորման համար:

29. Սահմանել որակի ներքին ապահովման համակարգում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության շրջանակները, տարբեր օղակների դերակատարությունները և պատասխանատվությունները:

30. Բարելավել քոլեջի շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները, ապահովել գործընթացների արդյունքների հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցների համար:

31. Մշակել և ներդնել որակի ապահովման համակարգի, ընթացիկ գործընթացների արդյունավետության և ինստիտուցիոնալ գնահատման գործուն մեխանիզմներ՝ միաժամանակ ուսումնասիրելով և տեղայնացնելով որակի ապահովման համակարգի առաջավոր լավագույն փորձը:

32. Պարբերաբար կատարել ընթացիկ ներդրված որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատում և բարելավում:

Աննա Փոլադյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 հունվարի, 2023 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի հենակետային բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Աննա Փոլադյան՝** կենսաբանական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Դավիթ Ղազարյան՝** Երևանի պետական բժշկական համալսարանի ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ՀՀ ԱՆ Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի որակի ապահովման բաժնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ,
3. **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
4. **Էդիտա Քասինյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բաբսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵՀԲՔ–ն 01.03.2022թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ԵՀԲՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ-ների հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

ԵՀԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 21.06.2022 թ.-ին: Ինքնավերլուծության գործընթացում ներգրավվել են հաստատության վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, դասախոսները, ուսանողները:

Նախապատրաստական փուլ

ԵՀԲՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-

ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախնական այց

2022 թվականի նոյմբերի 3-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ԵՀԲՔ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. նոյեմբերի 14-17-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 04.01.2023 թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հաշվի առնելով այդ դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 20.01.2023թ.-ին:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

23 հունվարի, 2023 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՀԲՔ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Երևանի հենակետային բժշկական քոլեջ»-ը՝ Հայաստանում միջին մասնագիտական բժշկական կրթությամբ կադրերի պատրաստման առաջին ուսումնական հաստատությունն է: Այն հիմնվել է 1921 թվականին մանկաբարձ-գինեկոլոգ Գրիգոր Արեշյանի կողմից: Տարիների ընթացքում ուսումնական հաստատությունը կազմավորվել և կայացել է՝ որպես Երևանի բազային բժշկական ուսումնարան, որի բազայի հիման վրա հետագայում ստեղծվել են ուսումնարաններ և մասնաճյուղեր տարբեր շրջաններում՝ Գյումրիում, Վանաձորում, Կապանում, Արմավիրում, Արարատում, Դիլիջանում, Գավառում, Հրազդանում, Մարտունիում, նաև Երևանում, որոնք հետագայում վերակազմավորվել են առանձին ուսումնական հաստատությունների, սակայն տարիներ շարունակ մեթոդական և ծրագրային ուղեցույցները ստացել են Երևանի բազային բժշկական ուսումնարանից:

ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 26-ի որոշման և ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. դեկտեմբերի 26-ի հրամանի համաձայն՝ «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» փակ բաժնետիրական ընկերության, որը համարվել է «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը:

Կրթություն. Քոլեջը բժշկական ոլորտի միջին մասնագիտական կրթական ծառայություններ է մատուցում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում, տրամադրում է աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ մասնագետներ: Քոլեջում իրականացվում են միջին մասնագիտական բժշկական հետևյալ 5 կրթական ծրագրերը՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա»:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. Քոլեջն ունի հետազոտությունների իրականացման և զարգացման վերաբերյալ մշակած և Խորհրդի կողմից հստատված «Ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգ», ուսանողների հետազոտական գործունեության կազմակերպման կառուցվածքային սխեմա: Ուսանողների հետազոտական աշխատանքները կատարվում են անհատական և խմբային ձևերով, զուգակցվում են ուսումնական և պրակտիկ աշխատանքների հետ: Հետազոտական աշխատանքի տարրեր են պարունակում ինտերակտիվ ուսուցման մեթոդները՝ պրոբլեմների իրավիճակային լուծում, դերային խաղեր, աշխատանքներ սիմուլյացիոն կաբինետում, փոքր խմբերով աշխատանքներ, պետական ավարտական քննություններ, որոնք ձևավորում են ստեղծագործական մտածելակերպ, ընդհանուր և մասնագիտական իրավասություն: Հետազոտական աշխատանքների ամենատարածված ձևերից են ուսանողների կողմից տարվա ընթացքում կատարվող ռեֆերատիվ աշխատանքները:

Արտաքին կապեր. Քոլեջը համագործակցել է Համաշխարհային բանկի, Հայաստանի սոցիալական բարեփոխումների (PADCO), PRIME-2, World Vision Հայաստան

ծրագրերի հետ: «Արաբկիր» բժշկական կենտրոնի «Դեռահասների առողջության պահպանման կենտրոն»-ի, «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի հետ համագործակցության շրջանակներում Քոլեջի դասավանդողները իրականացրել են դպրոցի բուժքույրերի վերապատրաստումներ Երևանում և մարզերում: ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ»-ի «Մանկական հիվանդությունների ամբիոն»-ի կողմից կազմակերպվող «Դպրոցահասակ և դեռահաս երեխաների բուժօգնություն, բուժքրոջ աշխատանքը դպրոցում» թեմայով դասընթացներին:

Համագործակցության պայմանագրերի շրջանակներում գործատուների հետ համատեղ իրականացվում են քոլեջ-գործատու համագործակցության, ավարտական ատեստավորման, պրակտիկայի ու այլ մեխանիզմներով և քննարկումների արդյունքում ՄԿԾ-ում կատարվում են որոշակի փոփոխություններ:

Որակի ապահովում. Քոլեջում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի բարձրացմանը նպաստող բարեփոխումներ են կատարվել՝ վերանայվել են կրթական ծրագրերը և դրանց ներկայացվող պահանջները, տարբեր ընթացակարգեր են մշակվել և լրամշակվել, ներդրվել է որակի կառավարման համակարգ, գործում է կրթության որակի պատասխանատուի հաստիքը, մշակվել և Խորհրդի որոշմամբ հաստատվել է որակի ապահովման քաղաքականությունը:

Քոլեջում գործում են կրթության որակի գնահատման և ապահովման մասնագիտական հանձնաժողովներ, որոնց հիմնական նպատակն է քոլեջում որակի մշակույթի ձևավորումը և զարգացումը, կրթական համակարգի բարելավումը և աստիճանական համապատասխանեցումը հավատարմագրման պետական չափանիշների պահանջներին:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ԵՀԲՔ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ում գործում է 2018-2023թթ. հնգամյա ռազմավարական ծրագիրը (ՌԾ), ուր հանգամանալից ներկայացված են քոլեջի առկա վիճակը, զարգացման հիմնական ուղղությունները և հայեցակարգը, հիմնական սկզբունքները, ինչպես նաև քոլեջի զարգացման նպատակը և խնդիրները: ՌԾ-ում հստակեցված են նաև նպատակին հասնելու համար ծրագրային դրույթները, զարգացման ռազմավարության գործառույթները՝ ներառված յոթ նախագծերով: Ըստ ՌԾ-ի՝ քոլեջի զարգացման ռազմավարական նպատակ է դիտարկվում կրթական առաջավոր տեխնոլոգիաների ներդրմամբ ավանդական, ինչպես նաև նորարարական ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ միջին մասնագիտական բժշկական կրթական համակարգի զարգացման տարածաշրջանային կենտրոն դառնալը:

ՌԾ-ում քոլեջի առաքելության առանձին բնորոշում տրված չէ: Քոլեջի առաքելությունը ներկայացված է 2020-2023թթ. եռամյա միջնաժամկետ զարգացման ծրագրում հետևյալ ձևակերպմամբ՝ «Ձևավորել անհրաժեշտ կրթական միջավայր կրթական նոր տեխնոլոգիաների ներդրմամբ միջին մասնագիտական բժշկական կրթություն ստանալու համար, մատուցել բարձրորակ կրթություն, խթանել ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը, ձգտել գերազանցության և նորարարության ուսուցման, ապահովել առողջապահական ոլորտի միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումն երկրի զարգացման պահանջներին, համադրել կրթության բովանդակությունը միջազգային չափանիշներին, ապահովել ուսումնական գործընթացի թափանցիկությունը, մատչելիությունը և հավասարությունը»: Փորձագիտական ուսումնասիրության համաձայն՝ քոլեջի սահմանած առաքելությունն ու կանոնադրությամբ սահմանված նպատակները համահունչ են: Կանոնադրական նպատակներից է. կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ ՀՀ կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն և ստանձնել բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը: Քոլեջն իր զարգացման ծրագրում կարևորում է նաև մասնագիտական և ուսումնառության բնագավառում նորարարությունների ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդնումը, զարգացումն ու տարածումը, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդնումը և կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները մեծամասամբ փաստում, ընդունում և կարևորում են քոլեջի վերոնշյալ առաջնորդական դերը: Փորձագիտական

հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են միջազգայնացման և առաջավոր փորձի ինտեգրման որոշակի նախադրյալներ, սակայն միջազգայնացմանը միտված համապարփակ գործողություններ դեռևս չեն իրականացվում:

Քոլեջը բժշկության ոլորտում իրականացնում է միջին մասնագիտական 5 կրթական ծրագիր՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա»: Հարկ է նշել՝ քոլեջը, վերոնշյալ կրթական ծրագրերով, իր անվանմանն ու առաքելությանը համաձայն, ապահովում է մասնագիտական կադրեր Երևանի և ՀՀ մարզերի աշխատաշուկայի սպասարկման համար: Ինչ վերաբերում է տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը, ապա այս ուղղությամբ քոլեջը դեռևս ձեռքբերումներ չունի:

Քոլեջի շահակիցներն են ՀՀ կառավարությունը, ԿԳՄՍ նախարարությունը, դիմորդները, ուսանողները, շրջանավարտները, դասավանդողները, աշխատակիցները, գործատուները և այլք: Տնօրենը ՌԾ-ն քննարկման և հաստատման է ներկայացրել քոլեջի Խորհրդին, որտեղ ընդգրկված են ներքին և արտաքին շահակիցները, մասնավորապես՝ բաժինների վարիչները, ուսանողները, լիազոր մարմնի ներկայացուցիչները: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՌԾ-ի քննարկման աշխատանքներում ներքին և արտաքին շահակիցները նախաձեռնողականություն չեն ցուցաբերել: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ քոլեջի վարչակազմը սերտ համագործակցում է շահակիցների հետ՝ քոլեջի առաքելության իրականացման, ռազմավարական զարգացումն ապահովելու նպատակով: Քոլեջում առկա են շահակիցների կարիքների ներկայացման տարբեր մեխանիզմներ, օրինակ՝ տնօրենի տարեկան հաշվետվությունը, քոլեջի ուսումնական տարվա ներքին գնահատումը, որոնք քննարկվում և հաստատվում են քոլեջի Խորհրդում, քոլեջի ստորաբաժանումների տարեկան և կիսամյակային հաշվետվությունները, 2021թ.-ից քոլեջում իրականացված հարցումները, կարիերայի բաժնի վարիչի կողմից իրականացված միջոցառումները և այլն: Ներքին միջավայրի վերլուծությունն իրականացվում է դասավանդողների և ուսումնառողների հետ քննարկումների, ֆոկուս-խմբերի, տարբեր հարցումների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ դեռևս չունի, և գտնվում է դրանց մշակման փուլում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների վերհանված կարիքները մասամբ են վերլուծվում, գործընթացը ինստիտուցիոնալ բնույթ չի կրում, պլանավորման, իրականացման, գնահատման ու բարելավման շրջափուլերը չեն փակում:

Քոլեջն իր գործունեության արդյունքների գնահատման համար ներդրել է հաշվետվությունների, զեկույցների մշակման և իրականացման մեխանիզմները: Հաշվետվությունները քննարկվում են խորհուրդներում, շահակիցների շրջանում: Ռազմավարական նպատակների իրականացման համար մշակվել է գործողությունների պլան-ժամանակացույց, որը ներառում է սահմանված առանձին նպատակների համար գործողությունները, վերջնական արդյունքը (անմիջական արդյունքի ցուցիչը), ստուգման ցուցիչը, ժամկետները, պատասխանատուն, պահանջված միջոցները (դրամական արտահայտությամբ): Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ

նախանշված ցուցիչները ոչ միշտ են ապահովվում և հետագայում կիրառվում գնահատման նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի իր գործունեության նպատակներն արտահայտող հստակ ձևակերպված առաքելություն, առանձնացված զարգացման ռազմավարական նպատակներ՝ բժշկության ոլորտում ապահովելով միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը: Գովելի է, որ քոլեջը ՀՀ-ում առաջատար դիրք է զբաղեցնում և նպաստում է Երևանի և ՀՀ մարզերի բժշկության ոլորտի աշխատատեղերի սպասարկմանը: Դրական է գնահատվում, որ քոլեջի ռազմավարական և կանոնադրական նպատակները համահունչ են՝ միտված գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն դառնալուն, մասնագիտական և ուսումնառության բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրմանը, զարգացմանն ու տարածմանը, ինչի ուղղությամբ քոլեջը դեռ անելիքներ ունի՝ մասնավորապես այս գործընթացների առավել համակարգումը և դրանց համար հստակ ռեսուրսների տրամադրումը կնպաստեն միջազգային փորձի ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ օգտագործելով քոլեջի համակազմի ամբողջական պոտենցիալը: Միևնույն ժամանակ գովելի է, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները փաստարկում և կարևորում են քոլեջի վերոնշյալ առաջնորդական դերը, առկա են որոշակի համագործակցության ծրագրեր, սակայն մտահոգիչ է, որ քոլեջը միջազգայնացմանը միտված համապարփակ գործողությունների ծրագիր դեռևս չի մշակել՝ հատկորոշելու իր դիրքը այս առումով և նախանշելու հետագա զարգացման ուղղությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ տարածաշրջանի համար մասնագիտական ռեսուրսային բազա ապահովելու պարագայում կիրագործվեն ռազմավարական նպատակները միջազգային փորձի լավագույն ինտեգրման առումով:

Դրական է գնահատվում, որ քոլեջում վարչակազմի և շահակիցների միջև առկա է տեսանելի համագործակցություն քոլեջի առաքելության իրականացման, ռազմավարական զարգացումն ապահովելու նկատառումով՝ նպաստելով քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ առկա են ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման որոշ մեխանիզմներ՝ ներառելով տարբեր հարցումներ, գործողություններ, գնահատումներ, հաշվետվություններ, քննարկումներ, ֆոկուս-խմբեր, շահակիցների ներգրավվածությունը խորհուրդներում, սակայն որոշակի առումով մտահոգիչ է, որ ՌԾ-ի քննարկման աշխատանքներում ներքին և արտաքին շահակիցները նախաձեռնողականություն չեն ցուցաբերել, տեսանելի չէ նրանց անմիջական մասնակցությունը ՌԾ-ի նպատակադրումների, գործունեության առանցքային ցուցիչների սահմանման գործում: Փորձագիտական խումբը գտնում է, որ շահակիցների կարիքների վերհանման բազմազանեցված մեխանիզմներ գործարկելու պարագայում գործընթացը ինստիտուցիոնալ հիմքերի վրա կդրվի, կապահովվի ՊԻԳԲ շրջափուլը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է համարվում, որ քոլեջում գործունեության արդյունքների գնահատման համար ներդրվել և գործում է հաշվետվությունների, զեկույցների մշակման և իրականացման մեխանիզմը, որոնք, քննարկվելով շահակիցների

շրջանում, նպաստում են դուրս բերված կարիքների համար առաջիկա պլանների մշակմանն ու իրագործմանը: Դրական է նաև գնահատվում, որ ռազմավարական նպատակների իրականացման համար մշակված գործողությունների պլան-ժամանակացույցն արտահայտում է քոլեջի նպատակադրումների իրականացման գործողություններն ու դրանց գնահատման ցուցիչները: Փորձագիտական խումբը գտնում է, որ առաջիկա տարվա ընթացքում իր իրականացման ավարտին մոտեցող ՌԾ-ի գնահատումը բարենպաստ հիմքեր կստեղծի հաջորդ ռազմավարական պլանավորման համար՝ նպաստելով առավել հստակ ու չափելի նպատակների ու խնդիրների սահմանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՀԲՔ-ը ունի բժշկական ոլորտի աշխատաշուկայի կարիքներին համապատասխանող մասնագիտություններ, առկա է ՈԱՇ-ին համահունչ հստակ և շատ կարևոր առաքելություն, սահմանված են համապատասխան նպատակ և խնդիրներ, ինչպես նաև գործում է առաքելության և նպատակների իրականացման արդյունքների հաշվետվությունների համակարգը, առկա են շահակիցների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիանալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2017թ.-ից ՀՀ ԿԳՄՄՆ ԵՀԲՔ-ն կազմակերպաիրավական տեսակով 100% պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերություն է: Քոլեջի կառավարումն իրականացվում է միջին մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներով և քոլեջի կանոնադրությամբ: Քոլեջի կառավարման մարմիններն են հիմնադիրը, քոլեջի կառավարման խորհուրդը, տնօրենը: Ըստ կանոնադրության՝ քոլեջի կառավարման բարձրագույն մարմինը ԵՀԲՔ-ի Խորհուրդն է, որի կազմը հաստատում է ՀՀ ԿԳՄՄ նախարարությունը: Խորհրդի կազմում ներգրավված են 15 անդամներ՝ դասախոսներ, ուսանողներ, լիազոր մարմնի և այլ ներկայացուցիչներ, որոնք լիազորված են ընտրել Խորհրդի նախագահին: Քոլեջի բաժնի վարիչները կառավարման խորհրդի անդամ են, որոնց միջոցով ևս կրթական կարիքները բարձրաձայնվում են ԿԽ-ում: Փորձագիտական այցի ընթացում պարզ դարձավ, որ ԿԽ աշխատանքները հիմնականում միտված են ՌԾ-ի արդյունավետ իրականացմանը: Զուգահեռաբար՝ ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում կառավարչական գործընթացներն կանոնակարգվում են անհրաժեշտ փաստաթղթային հենքով: Քոլեջի ընթացիկ կառավարումը կատարում է տնօրենը: Տնօրենն ունի ուսումնական, վարչատնտեսական, ուսումնաարտադրական աշխատանքների գծով

տեղակալներ: Ուսումնական աշխատաքների գծով փոխտնօրենի ենթակայության ներքո գործում է ուսումնական մասի վարիչը, ապա՝ ամբիոնի և բաժնի վարիչները և մեթոդիստը, իսկ ուսումնաարտադրական աշխատանքների գծով փոխտնօրենի ենթակայության ներքո՝ պրակտիկայի բաժնի վարիչը: Քոլեջում առկա է յոթ ամբիոն:

Քոլեջում գործում է տնօրինական խորհուրդը, որը խորհրդակցական մարմին է, քննարկում է քոլեջի ընթացիկ ուսումնադաստիարակչական և կազմակերպչական հարցեր: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ տնօրինական խորհրդի նիստերն իրականացվում են ըստ անհրաժեշտության, տարվա ընթացքում քսան և ավելի նիստ է հրավիրվում, ուր քննարկվող հարցերից են օրինակ՝ ուսանողների գնահատականների վարահանձնման վերաբերյալ հարցերը և այլն:

Որպես ուսանողության ինքնակառավարման մարմին քոլեջում գործում է նաև ուսանողական խորհուրդը (ՈՒԽ):

Քոլեջի կողմից կառավարման արդյունավետության բարձրացումը և որակյալ կադրային ներուժի զարգացումը առանձնացված է որպես զարգացման ռազմավարության գործառույթ, որի իրականացման համար ՌԾ-ում մշակվել է գործողությունների մի ամբողջ շարք: ՌԾ-ում նպատակները նախագծերի ձևով են տրված: Նախորդ և գործող ՌԾ-ների միջև կատարված համադրությունները ցույց են տալիս, որ դրանցում առկա նախագծերը հիմնականում նույնական են: Հարկ է նշել՝ գործող 2018-2023թթ. ՌԾ-ում ներդրվել են «Կրթության շարունակականություն», «Կառավարում և վարչարարություն» և «Որակի պատասխանատու» նախագծերը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2018-2023թթ. ՌԾ-ի հիմքում դրված չեն նախորդ ՌԾ-ի նախագծերի գնահատման արդյունքները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում կառավարչական գործընթացներն իրականացվում են «վերևից ներքև» և «ներքևից վերև» սկզբունքների պահպանմամբ և զուգորդմամբ: Բոլոր ստորաբաժանումները իրենց գործունեությունը կազմակերպում և իրականացնում են քոլեջում գործող կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:

Քոլեջը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է որոշակի նյութական և ֆինանսական ռեսուրսներով՝ դրանք ուղղելով կանոնադրական և ռազմավարական նպատակների իրականացմանը: Քոլեջում ձևավորված շահույթը շահութահարկի գծով ծախսը նվազեցնելուց հետո 50% շահութաբաժնի չափով ենթակա է վճարման պետական բյուջե: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կիսամյակային կտրվածքով կազմվում է անհրաժեշտ ռեսուրսների ցանկը, և ըստ վերհանված կարիքի՝ դրամական միջոցներ են հատկացվում յուրաքանչյուր կրթական ծրագրի նյութատեխնիկական բազայի արդիականացման ու համալրման համար: Հարկ է նշել, որ դրանք հաճախ ոչ հավասարաչափ են բաշխվում կրթական ծրագրերի միջև: Որպես ռեսուրսատար կրթական ծրագիր է դիտարկվում «Ատամնատեխնիկական գործ»-ը, որի համար առավել շատ նյութատեխնիկական ռեսուրսներ են պահանջվում: Քոլեջը կարևորում է նաև շենքային պայմանների բարվոք վիճակը, որի համար ըստ վերհանված կարիքի ևս դրամական միջոցներ է հատկացնում: Տարեկան ձևավորված շահույթի մի մասը հավելավճարների, պարգևավճարների տեսքով տրվում է դասախոսական կազմին: Փորձագիտական այցից

պարզվեց, որ հավելյալ աշխատանք կատարած դասախոսները (օրինակ՝ մոդուլային ծրագրերի հետ կատարվող և այլ աշխատանքներ) խրախուսվում են: Քոլեջի բյուջեից միջոցներ են տրամադրվում նաև ուսումնական ձեռնարկների, դասագրքերի կազմման/տպագրության համար:

Քոլեջի ֆինանսների բաշխման գործընթացը գնահատվում է ԿԽ-ի կողմից, միևնույն ժամանակ, շահույթի բաշխման ուղղությունները ևս քննարկվում են ԿԽ-ում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պլանավորում է ներդնել սիմուլյացիոն կենտրոն, սակայն դրան զուգահեռ առկա է նորագույն տեխնիկայի, դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման կարիք: Քոլեջում գործող «ֆինանսների տնօրինման քաղաքականությամբ և ընթացակարգ»-ով քոլեջի ֆինանսական գործունեության ռազմավարական նպատակն է՝ ֆինանսական համակարգի բարեփոխումը, կրթական, տնտեսական ու սոցիալական ոլորտներում կայուն ֆինանսական վիճակի հաստատումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ դեռևս քոլեջը գործուն ծրագրեր և քայլեր չի իրականացնում:

Քոլեջի կառավարման մարմիններում, հանձնաժողովներում ներգրավված են դասախոսներ և ՈւԽ-ի ներկայացուցիչներ, ինչը, ըստ ներքին շահակիցների, հնարավորություն է տալիս նրանց մասնակցելու քոլեջի կառավարման գործընթացին և անմիջական մասնակցություն ունենալու տարբեր որոշումների կայացմանը: Խորհրդի նիստերում ընդունվում են որոշումներ, որոնք օրակարգ են բերվում ուսանողների և դասավանդողների կողմից և բխում են նրանց շահերից: Օրինակ, Covid-19 համավարակի ընթացքում բազմաթիվ հարցեր են բարձրացվել անձնակազմի կողմից և մեծամասամբ լուծում ստացել: Ֆորմալ տեսանկյունից մեխանիզմը ներդրված է և գործում է, հարցի մյուս կողմն այն է, որ շատ խնդիրներ չեն հասնում մինչև նիստերի օրակարգ, կամ լուծվում են տեղում՝ ամբիոնի և բաժնի վարիչների հետ, կամ շատ անգամ լուծումն անիրատեսական է թվում և քննարկման չի ներկայացվում, երբեմն էլ դասախոսները և ուսանողները նախաձեռնող չեն, առաջարկներով հանդես չեն գալիս:

Քոլեջում առկա են առաքելությանը ու նպատակներին համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումներ: Քոլեջը կարճաժամկետ է դիտարկում կիսամյակային և տարեկան ուսումնական գործընթացի պլանավորումը/կազմակերպումը՝ ուսումնական պլաններով, մոդուլային, առարկայական ծրագրերով, դասացուցակներով, ուսումնական և այլ ժամանակացույցներով՝ ներառյալ տարեկան բյուջեի պլանավորումը: Խորհուրդը քննարկում և վերլուծում է տնօրենի ներկայացրած կիսամյակային հաշվետվությունները, քննարկում և հաստատում է քոլեջի ուսումնական տարվա գործունեության ներքին գնահատման տեղեկանքը: Կարճաժամկետ պլանավորման արդյունքները մշտապես դիտարկվում են՝ կատարվում են դասալսումներ, վերլուծվում ամբիոնների, բաժինների, տարբեր ստորաբաժանումների ղեկավարների կիսամյակային և տարեկան հաշվետվությունները, կազմակերպվում են ֆոկուս-խմբեր և ընթացիկ ուսումնական գործընթացի հետ կապված այլ գործողություններ:

Որպես միջնաժամկետ պլանավորում է դիտարկվում քոլեջի կողմից հաստատված 2020-2023թթ. Զարգացման ծրագիրը, ուր ներկայացված են քոլեջի կանոնադրական նպատակներն ու գործառույթները, ուսանողների և շրջանավարտների շարժընթացը վերջին 5 տարվա կտրվածքով, հաստատության անձնակազմը 2020 թ.-ի դրությամբ,

իրականացված է SWOT վերլուծություն, կցված է գործողությունների պլան-ժամանակացույցը: Նշյալ եռամյա ծրագրում քոլեջը ներկայացնում է իր Տեսիլը (տեսլական) և առաքելությունը: Երկարաժամկետ պլանավորում համարվում է 2018-2023թթ. ՌԾ-ն, ուր ներառված են քոլեջի զարգացման հայեցակարգը, հիմնական սկզբունքները, զարգացման ռազմավարական նպատակներն ու խնդիրները, նպատակին հասնելու ծրագրային դրույթները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ եռամյա զարգացման պլանը և գործող հնգամյա ռազմավարական ծրագիրը ընդհանրության մեջ համադրելի են, սակայն որոշ դեպքերում ՌԾ-ում արտացոլված չէ եռամյա Զարգացման ծրագրով սահմանված առաքելությունը և տեսլականը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ եռամյա և հնգամյա պլաններին համարժեք գործունեության վերլուծությունը, գնահատումը մասամբ է իրականացվում: Քոլեջի բոլոր ստորաբաժանումները, դասախոսները ներկայացնում են հաշվետվություններ, առկա են քոլեջի տնօրենի տարեկան հաշվետվությունները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք ներառում են որոշ վերլուծություններ, գնահատման ամփոփումներ, սակայն կատարողական-հաջորդ տարվա պլան շղթան համակարգված չի գործում:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի և ստորաբաժանումների ղեկավարությունը պարբերաբար իրականացնում են քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, մշտադիտարկում, և վերլուծությունները ներկայացնում են իրենց հաշվետվություններում՝ տնօրենի, ստորաբաժանումների ղեկավարների, ուսանողների ակադեմիական առաջադիմության վերաբերյալ, պետական որակավորող հանձնաժողովների նախագահների և այլ հաշվետվությունները: Իրականացվում են նաև աշխատաշուկայի կարիքների դիտարկումներ, ուսումնասիրություններ և քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումանսիրություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար 2021թ. ստեղծված ատամնատեխնիկական սիմուլյացիոն կաբինետը քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքում է ստեղծվել, ինչպես նաև «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության նկատմամբ մեծ պահանջարկի արդյունքում տրվել է նշյալ կրթական ծրագրի մեկնարկը: Որակի ապահովման և կարիերայի ուղղորդման պատասխանատուները ևս մասնակցություն ունեն տվյալների հավաքագրման և քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության գործում: Քոլեջում հաշվի են առնվում գործատուների և պրակտիկաների վայրերի ղեկավարների մոտեցումները՝ հնարավորության սահմաններում փոփոխություններ են կատարվում կրթական ծրագրերի մոդուլներում: Այդքանով հանդերձ, հարկ է առանձնացնել, որ արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատման առկա մեխանիզմները դեռևս բարելավման կարիք ունեն:

2021թ.-ից քոլեջում առկա է որակի ապահովման պատասխանատուի հաստիքը: Քոլեջի կառավարման մարմինները ձգտում են վարչարարությունն իրականացնել որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում՝ ՊԻԳԲ): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից նախատեսվող բարեփոխումները և գործընթացները պլանավորվում են, ներկայացվում են տնօրենի հաստատմանը,

այնուհետև կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց իրավասությունների շրջանակում իրականացնում են պլանավորված գործողությունները: Որոշ դեպքերում կատարվում են վերլուծություններ, գնահատման ամփոփումներ, իրականացվում է մասնակի բարելավում, սակայն այս գործընթացները համակարգային չեն, ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում: Տվյալների հավաքագրման գործընթացները տարերային բնույթ ունեն:

Քոլեջի ղեկավար անձնակազմը պարբերաբար հանդիպումներ է ունենում ուսանողների, դասախոսների, գործատուների հետ, բացահայտում է որոշ կարիքներ, հավաքագրում նրանց կարծիքները, առաջարկությունները, որոնք հաշվի են առնվում հետագայում որոշումներ կայացնելիս: Վերլուծություններ իրականացվում են նաև ներքին օղակներում, օրինակ՝ յուրաքանչյուր ամբիոն ամիսը առնվազն 1 անգամ նիստ է հրավիրում, որի ժամանակ խնդիրներն են դուրս բերվում, դրանց լուծման շուրջ կատարվում որոշ առաջարկներ: Նույն տրամաբանությամբ վերլուծությունները կատարում են նաև բաժինները: Կիսամյակի ավարտին բոլոր ստորաբաժունումները (գրադարան, որակի, կարիերայի, պրակտիկայի բաժինները) տնօրենին հաշվետվություններ են ներկայացնում, ուր առկա են որոշակի վերլուծություններ: Դրանց հիման վրա տնօրենը ներկայացնում է իր հաշվետվությունը ԿԽ-ի քննարկմանը: Կրթական ծրագրերում ևս առաջացած կարիքի հիմքով վերանայումներ են իրականացվում, մասնավորապես՝ կարևորվում են եզրափակիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների, գործատուների կարծիքներն ու առաջարկությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում, բարելավման կարիք ունեն: ՊԻԳԲ շրջափուլն ամբողջությամբ գործում է մասնակի դեպքերում (որոշ դեպքերում ավարտուն գործում է առանձին մոդուլների համար): Հաճախ վերլուծված ցուցանիշների և գնահատված գործընթացների համակցումը չի բերում նոր առաջարկների:

Քոլեջի մասին տեղեկատվությունը հրապարակվում է «Սփյուռ» տեղեկատվական համակարգում, «Հայաստանի քոլեջները և արհեստագործական ուսումնարանները» տեղեկատու ձեռնարկում, թերթերում, սոցիալական ցանցերում, որոնց մեջ նշվում է քոլեջի և կարիերայի պատասխանատուի ֆեյսբուքյան էջերը: Առկա է նաև Քոլեջի էլեկտրոնային հասցեն: Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը նաև տարածվում է բուկլետների, տարբեր դպրոցների աշակերտների ճանաչողական բնույթի այցերի ընթացքում: Քոլեջի էլեկտրոնային կայքը գործարկվել է փորձագիտական այցի ընթացքում: Քոլեջը կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներից է համարում շրջանավարտների վերաբերյալ գործատուների կարծիքը. որպես օրինակ կարելի է նշել է Երևանի Հ. Թումանյանի անվան դպրոցի կողմից ստացած շնորհակալագիրը՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղորդման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կառավարչական գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթային հենքով, կառավարման մարմինների ծավալած գործունեությունը միտված է քոլեջի ՌԾ-ի

արդյունավետ իրականացնանը՝ փաստելով քոլեջում ներդրված կառավարման համակարգի արդյունավետության մասին։

Գովելի է, որ քոլեջի կողմից կառավարման արդյունավետության բարձրացումը դիտարկվում է որպես զարգացման ռազմավարության գործառույթ և վերջինիս իրագործման համար մշակվել է գործողությունների տրամաբանական շղթա, ուստի կառավարման մակարդակում քոլեջը ցուցաբերում է առաջընթացի ապահովում: Դրական է, որ նախորդ և գործող ՌԾ-ներում նպատակները նախագծերի ձևով են տրված, գործող ՌԾ-ում ներդրվել են նոր նախագծեր, սակայն ընդհանրության մեջ դրանք նույնական են և, քանի որ գործող ՌԾ-ում այդ նախագծերի գնահատումներն ամփոփ ներառված չեն, սա կարող է խոչընդոտել քոլեջի զարգացման հնարավորությունները։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կառավարչական գործընթացներն իրականացվում են «վերևից ներքև» և «ներքևից վերև» սկզբունքների պահպանմամբ և զուգորդմամբ՝ հիմքում ունենալով գործող կանոնակարգերն ու ընթացակարգերը և արդյունքում նպաստելով հիեարխիկ կապերի արդյունավետ գործարկմանը։

Գովելի արձանագրում է, որ քոլեջը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է որոշակի նյութական և ֆինանսական ռեսուրսներով, որոնք նպատակաուղղում է կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացմանը: Դրական է գնահատվում, որ շահույթի բաշխման ուղղությունները քննարկվում են ԿԽ-ում, կիսամյակի համար կազմվում է յուրաքանչյուր կրթական ծրագրի նյութատեխնիկական բազայի համալրման անհրաժեշտ ռեսուրսների ցանկը և դրամական միջոցներ տրամադրվում այդ ծախսերի իրականացման համար, սակայն միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ քոլեջի միջոցները հաճախ ոչ հավասարաչափ են բաշխվում կրթական ծրագրերի միջև, առկա է նորագույն տեխնիկայի, դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կարիք, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների աղբյուրներ գտնելու պարագայում քոլեջում կապահովվի ֆինանսական վիճակի կայունությունը։

Դրական է, որ քոլեջի դասախոսներն ու ուսանողները, ներգրավված լինելով կառավարման մարմիններում, մասնակցում են քոլեջի կառավարման գործընթացին և իրենց առնչվող որոշումների կայացմանը: Նշյալի համատեքստում խնդրահարույց է, որ Ֆորմալ տեսանկյունից մեխանիզմը ներդրված է և գործում է, սակայն շատ խնդիրներ չեն հասնում մինչև նիստերի օրակարգ՝ տեղում լուծվելու կամ շատ անգամ լուծումն անիրատեսական թվալու պատճառով, շատ հաճախ էլ դասախոսները և ուսանողները նախաձեռնող չեն։ Արդյունքում կարող է վտանգվել կարիքների վերհանման և լուծման մեխանիզմի արդյունավետ իրականացումը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ, դրանց գործարկումը և համարժեք հաշվետվությունները քննարկվում են ԿԽ-ում, ստորաբաժանումներում, ամբիոններում: Դրական է նաև, որ ներկայացված հաշվետվություններում առկա է վերլուծական բաղադրիչ, սակայն վերլուծությունների արդյունքում դուրս բերված բարելավման ենթական խնդիրները հաջորդ տարվա պլաններում ներառելու մեխանիզմները հստակ չեն

գործում՝ առաջացնելով շեղում կատարողական-հաջորդ տարվա պլան շղթայի տրամաբանական իրագործման համար:

Չնայած որ կառավարչական գործընթացում ներդրված է ՊԻԳԲ շրջափուլը, այդուհանդերձ բոլոր շրջափուլերը ամբողջական չեն գործում՝ բարելավում, գնահատում շրջափուլերը մասնակիորեն են գործում, վերլուծված ցուցանիշների և գնահատված գործընթացների համակցումը նոր առաջարկների հարթակ չի հանդիսանում, ինչի արդյունքում կարող է վտանգվել կառավարչական ցիկլի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ՝ նպաստելով քոլեջի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ու դիմորդների քանակի ավելացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՀԲՔ-ում կառավարչական գործընթացներն արդյունավետ են, առկա է ռազմավարական կառավարման և պլանավորման գործիքակազմ, գործում են կրթական գործընթացի գնահատման և մշտադիտարկման որոշ մեխանիզմներ, ներդրված հաշվետվողականության համակարգը խնդիրներ շեշտադրող է, ֆինանսական ռեսուրսները բաշխվում են սահմանված քաղաքականությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի ռազմավարական նպատակներից է աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրերի իրականացումը՝ միտված շրջանավարտների զբաղվածության ապահովմանը, ուսանողների բավարարվածության մակարդակի բարձրացմանը քոլեջում ստացած կրթությունից, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի զարգացման պահանջներին և կրթության բովանդակության համադրումը միջազգային չափանիշներին: Քոլեջը բժշկական ոլորտի միջին մասնագիտական կրթական ծառայություններ է մատուցում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում, իրականացնում է կրթական ծրագեր հետևյալ մասնագիտություններով՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա»: Շրջանավարտները ստանում են համապատասխանաբար

բուժքրոջ/բուժեղբոր, մանկաբարձի, դեղագործի, ատամնատեխնիկի և բուժքույր/բուժեղբայր-կոսմետոլոգի որակավորում:

Կրթական ծրագրերը կազմելիս քոլեջը հիմնվում է պետական կրթական չափորոշիչների վրա: Ուսումնական մասի և ամբիոնների վերահսկողությամբ քոլեջն իրականացրել է 2021 թվականի հունիսի 4-ին հաստատված ՊԿՉ-ների տեղայնացում: Քոլեջի կողմից մշակվել են մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, բաժանողական նյութեր, հարցաշարեր: Քոլեջը մոդուլային ուսուցման է անցել 2013 թվականից, ընդ որում՝ փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ մոդուլային ուսուցումը դժվարություններ չի ստեղծել և առավել նպաստել է ուսանողների մոտ գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Տեղայանացվել և քոլեջի Խորհրդի կողմից հաստատվել են մասնագիտությունների կրթական ծրագրերի նկարագրերը, որոնցում սահմանվում են մասնագիտական գործունեության բնութագրերը, հիմնական կրթական ծրագրերի բովանդակությայն պարտադիր նվազագույնի և իրականացման պայմանների նկատմամբ պահանջները՝ համաձայն ՊԿՉ-ների: Մասնագիտական մոդուլային/առարկայական ծրագրերում ներկայացված են ծրագրի և դասընթացի նպատակը, մոդուլի տևողությունը, տեսական և գործնական ժամերի բաշխվածությունը, մուտքային պահանջները, ուսումնառության արդյունքները, կատարման չափանիշները, գնահատման կարգը և միջոցը, մեթոդաբանությունը և ռեսուրսները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախասիրական մոդուլները ընտրելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի պահանջները, իսկ ծրագրային փոփոխությունները կատարվում են չափորոշիչներով նախատեսված փոփոխությունների թույլատրելի սահմաններում՝ հաշվի առնելով ուսումնական տարվա ընթացքում դասավանդողների և գործատուների կողմից կատարված առաջարկությունները: Գրեթե բոլոր մասնագիտությունների գծով առկա են օրինակներ, երբ առաջարկների հիման վրա կատարվել են փոփոխություններ: Օրինակ՝ «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության շրջանակներում՝ մատնահարդարման և ոտնահարդարման տեխնիկաների վերաբերյալ, դասավանդողներն իրենց ուսումնառության նյութերում ներառում են նաև այն թեմաները, որոնց պահանջարկը կա աշխատաշուկայում: Գործատուների հետ քննարկումների արդյունքում «Քույրական գործ» մասնագիտության «Թերապիա» մոդուլի շրջանակներում որոշ հիվանդությունների վերաբերյալ թեմաների փոփոխություն է նախատեսվում, ինչպես նաև գործատուների առաջարկով որոշակի փոփոխություններ են կատարվել պետական քննությունների հարցաշարերում: «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության շրջանակներում գործատուների և դասավանդողների առաջարկով որոշվել է փոփոխություն կատարել մոդուլների միջև տրամաբանական հաջորդականության սահմաններում, ըստ որի՝ երրորդ կուրսում դասավանդվող «Էպիլյացիա՝ մազահեռացման իրականացում» և «Դեմքի մերսման իրականացում» մոդուլների համար անհրաժեշտ չէ ուսումնասիրել «Բուժական կոսմետոլոգիայում դեմքի մաշկի խնամքի ընթացակարգի իրականացում» մոդուլը որպես մուտքային պահանջ:

Ամբիոնները իրենց գործառույթների շրջանակում վերահսկում են վերջնարդյունքների ձեռքբերումը ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը, ուսումնառության նյութերը: Քննարկումներին մասնակցում է նաև

քոլեջի մեթոդիստը, անհրաժեշտության դեպքում հրավիրվում են նաև գործատուներ: Ուսանողակենտրոն ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը խրախուսելու նպատակով քոլեջը մշակել է «Դասավանդման ակտիվ ուսուցման մեթոդների մեթոդական ուղեցույց» (լրամշակված և հաստատված է 2021 թվականի հոկտեմբերի 5-ին), որում որպես ինտերակտիվ ուսուցման սկզբունքներ սահմանված են փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի ակտիվությունը, համագործակցությունը, ինքնաարտահայտման խրախուսումը, հետադարձ կապը և այլն: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են կախված դասընթացի նպատակներից, խնդիրներից, բովանդակությունից, ժամաքանակից և հիմնված են լինում վերջնարդյունքների վրա, հաշվի են առնվում դասալսումների արդյունքները: Դասախոսների թղթապանակմներում ներառված են մոդուլի ծրագրերը, թեմատիկ և ուսումնառության պլանները, ուսումնառության նյութերը և գործնական դասերի համար առաջադրանքները, հարցաշարերը, բաժանողական նյութերը, դերային խաղերի սցենարները, համր գրաֆոլոգիկ գծապատկերները, որոնք միտված են կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովմանը և կատարման չափանիշների պահպանմանը: Ակտիվորեն կիրառվում են նաև իրավիճակային խնդիրները: Համաճարակաբանության հետ կապված իրավիճակային խնդրի օրինակ է, երբ ուսանողին առաջարկվում է բազմանդամ ընտանիքում որևէ անդամի Հեպատիտ C–ով հիվանդ լինելու պարագայում ներկայացնել վիրուսի տարածման կանխարգելման գործողությունները: «Քույրական գործ» ծրագրում մեկ այլ իրավիճակային խնդրի օրինակ է, երբ հիվանդը ոսկրերի շրջանում ցավեր ունենալու և անշարժ պառկելու դեպքում ուսանողը պետք է գնահատի վիճակը և ներկայացնի կատարվելիք գործողությունները: Դասերի ընթացքում հաճախ անիմացիոն ֆիլմեր են ցուցադրվում և քննարկվում ուսանողների հետ: Ամբիոններին կից գործում են առարկայական խմբակներ, որոնց շրջանակներում սովորողներին հանձնարարվում են ինքնուրույն աշխատանքներ, պաստառներ մասնագիտական թեմաների վերաբերյալ, նաև հետազոտական որոշակի առաջադրանքներ:

Քոլեջում մշակվել և ներդրվել են գնահատման հետևյալ կարգերը՝ «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման», «Ուսուցման արդյուների ընթացիկ ստուգման և գնահատման», «Ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման և վերահանձնման», «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման», «Հանրակրթական ծրագրով» բաժնի պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման»: Քոլեջում գիտելիքների գնահատումն իրականացվում է ընթացիկ, միջանկյալ ստուգումների, ստուգարքների, քննությունների, պետական ամփոփիչ ատեստավորման անցկացմամբ: Միջանկյալ քննությունների մոդուլներն ընտրելիս հաշվի են առնում առանցքային, մասնագիտական մոդուլների ընդգրկման կարևորությունը, որոնց վերաբերյալ հարցեր ընդգրկված են լինում նաև պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցատոմսերում: Պետական ատեստավորող հանձնաժողովի կազմում ընդգրկված գործատուների առաջարկով իրականացվում են պետական հարցաշարերի փոփոխություններ: Օրինակ, «Դեղագործություն» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման քննատոմսերի հարցաշարում փոփոխություններ են կատարվել «Դեղերի դեղատնային

տեխնոլոգիա» և «Դեղերի գործարանային տեխնոլոգիա» մոդուլները դասավանդող դասախոսների և պետական հանձնաժողովում ընդրկված գործատու ներկայացուցիչների առաջարկով, ովքեր առաջարկել են վերը նշված մոդուլներից պարտադիր հարցեր ընդգրկել պետական քննության հարցաշարում՝ հիմանավորելով, որ նշված փոփոխությունը դեղագործին կօգնի անհատական դեղատոմսով դեղ պատրաստելու, ինչպես նաև գործարանային արտադրական պրոցեսների նրբությունները կիրառելու համար:

«Ուսուցման արդյունքների ընթացիկ ստուգման և գնահատման» կարգում նշված են գնահատման չափանիշները: Սովորողների գնահատման հիմք են հանդիսանում դասընթացի ընթացքում ցուցաբերած ընթացիկ ակտիվությունը, նյութի տիրապետման մակարդակը, գործնական աշխատանքներում ցուցաբերած արդյունքները, իսկ գնահատման բողոքարկումների դեպքում կարգավորվում են դասավանդող դասախոսի հետ՝ համաձայն վերոնշյալ ընթացակարգի: Այցից պարզ դարձավ, որ սովորողների մոտ հիմնականում դրսևորվում է բարձր առաջադիմություն, և գերակշռում են լավ և գերազանց գնահատականները, իսկ բացակայությունների դեպքում սովորողները սահմանված կարգով լրացնում են բաց թողնված նյութերի ուսուցումը առաջադիմությունը խթանելու նպատակով, որից ելնելով էլ քոլեջում ներդրված է Խորհրդի կողմից հաստատված «Ուսումնական դասընթացից բացակայող ուսանողների բացակա դասաժամերի լրացման կարգ»-ը, ինչը նպաստում է նաև սովորողների հաճախումների բարձր ցուցանիշին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատումն իրականացնելիս կարևորվում են տեսական և գործնական բաղադրիչները, սակայն առավել շեշտադրվում է գործնական հմտությունների ձեռքբերումը, որով էլ պայմանավորված ընթացիկ և ամփոփիչ քննություններում բոլոր մասնագիտություններում պարտադիր ներառվում են նաև գործնական առաջադրանքներ, օրինակ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման ժամանակ յուրաքանչյուր ուսանող ներկայացնում է հատուկ մասնագիտական մոդուլների ուսումնառության ընթացքում իր պատրաստած լրիվ և մասնակի շարժական թիթեղային պրոթեզները:

Պրակտիկաների գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև ուսանողի գործնական հմտությունների գնահատմամբ: Պրակտիկաների իրականացումը վերահսկվում է քոլեջի պրակտիկայի պատասխանատուի կողմից, ուսանողները իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ լրացնում են օրագրեր, այնուհետև դրանք հիմք են հանդիսանում ուսանողների գնահատման համար:

Քոլեջը ներդրել է «Ակադեմիական ազնվության հայեցակարգ», որում սահմանված են ակադեմիական ազնվության սկզբունքները, նշված կարգի մասին պարտադիր տեղեկացվում են բոլոր ուսանողները: Քոլեջի կողմից կազմակերպվում են նաև սեմինարներ և քննարկումներ՝ քոլեջի ուսանողների, դասախոսների հետ՝ ակադեմիական ազնվության վերաբերյալ՝ գնահատումը հնարավորինս օբյեկտիվ և թափանցիկ դարձնելու նպատակով: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ բոլոր անհատական աշխատանքներում, ռեֆերատներում են պահպանվում մասնագիտական գրականությանը հղում կատարելու սկզբունքը, եզրակացությունները ևս հաճախ բացակայում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատականների

բողոքարկման դեպքեր հիմնականում չեն լինում, դասախոսների հետ քննարկումների միջոցով ուսանողները ստանում են համապատասխան արձագանք:

Մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման նպատակով քոլեջի կողմից մշակվել և Խորհրդի կողմից հաստատվել է «Բենչմարքինգի քաղաքականությունը և ընթացակարգը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը բենչմարքինգային քաղաքանությունը համակարգային և պլանավորված չի իրականացնում: Այդուհանդերձ, քոլեջը իրականացրել է համեմատական վերլուծություններ՝ ներքոլեջային բենչմարքինգ «Բուժական կոսմետոլոգիա» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների միջև՝ համեմատելով նշված մասնագիտությունների ընդունելության կարգն ու հիմքը, որակավորումները, լսարանային ծանրաբեռնվածությունը, պրակտիկաները, գնահատման կարգերը, ամփոփիչ ատեստավորման ձևերը և ռեսուրսները: Ներքոլեջային բենչմարքինգի արդյունքների հիման վրա որոշվել է «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության օրինակով սիմուլյացիոն կաբինետ ստեղծել նաև «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության համար:

Քոլեջը ռազմավարական նպատակներին համահունչ կարևորում է շարժունության և միջազգայնացման հարցերը, սակայն այցից պարզ դարձավ, որ սովորողների և դասավանդողների շարժունության ընդլայնմանը և միջազգայնացմանը խոչընդոտում է ֆինանսական մրջոցների սղությունը և օտար լեզուների ոչ բավարար իմացությունը, ինչպես նաև առկա է նախաձեռնողականության պակաս:

Քոլեջը մշակել և ներդրել է «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգ»-ը՝ հաստատված Խորհրդի կողմից 2021 թվականի հոկտեմբեր 5-ին, համաձայն որի՝ կրթական ծրագրի մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը, համապատասխանությունը կրթական չափորոշիչներին և նպատակներին, վերահսկել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը, ինչպես նաև գնահատել ՄԿԾ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի և ՈԱՇ-ի պահանջներին: Ըստ այդմ՝ նախատեսվում է ստեղծել մոնիթորինգային խումբ, որում ըստ քոլեջի նաև ցանկալի է արտաքին շահակիցների ընդգրկում: Այցից պարզ դարձավ, որ ծրագրերի մշտադիտարկման գործընթացը իրականացվում է ամբիոնների վերհսկողությամբ՝ ըստ անհրաժեշտության, վարիչների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հավաքագրվում են ծրագրային փոփոխությունների առաջարկները դասավանդող դասախոսների և գործատուների կողմից, քննարկվում են այդ փոփոխությունները ամբիոնների նիստերում և համապատասխան որոշումներից հետո կատարվում են փոփոխությունները: ՄԿԾ-ների փոփոխությունները կատարելիս հաշվի են առնվում նաև դասավանդողների առաջարկները: Օրինակ՝ ներդրվել են հետևյալ մոդուլները՝ «Մանկաբարձական գործ» մասնագիտությամբ «Վերարտադրողական առողջություն» մոդուլը, «Քույրական գործ» մասնագիտության համար «Պրոֆեսիոնալ հիվանդություններ» մոդուլը, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար «Ժամանակակից պրոթեզավորում» մոդուլը: «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության ընտրովի «Վիզաժ» մոդուլը փոխարինվել է «Մաշկի նորագոյացությունները կոսմետոլոգիայում» մոդուլով, իսկ «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրում՝ «Մարքեթինգ»-ը փոխարինվել է «Պաթոլոգիայի հիմունքներ»-ով :

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես կրթական ծրագրերի արդյունավետության ցուցիչներ քոլեջի կողմից դիտարկվում են սովորողների առաջադիմությունը և աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն իր ռազմավարությամբ շեշտադրել է աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրերի իրականացումը և կրթության որակի ապահովումը, որին համահունչ շարունակաբար բարելավում է իր կրթական ծրագրերը: Աշխատաշուկայի պահանջարկի և մասնագիտական ոլորտերում նորամուծությունների ուսումնասիրումը հանգեցնում է կրթական ծրագրերի պարբերաբար փոփոխությանը, ինչով էլ պայմանավորված տարեցտարի ավելանում է իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը: Կրթական ծրագրերի բարելավման արդյունավետ հիմք կարող են հանդիսանալ քոլեջի կողմից կրթական ծրագրերի գնահատման մեջ արտաքին շահակիցների շարունակական ներգրավման աշխատանքները՝ միտված աշխատաշուկային համապատասխան գործնական հմտություններով և կարողություններով մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ քոլեջը, կարևորելով կրթական ծրագրով նախատեսվող վերջնարդյունքների ձեռքբերումը, շեշտադրում է ուսանողակենտրոն ուսուցումը և սովորողների գործնական հմտությունների ու կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ բազամազանեցնելով գործնական առաջադրանքները, որոնք միտված են ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից կրթական ծրագրերի առաջավոր փորձի ուսումնասիրման և համեմատական վերլուծությունների պլանավորված և համակարգային իրականացումը, այնուհետև լավագույն փորձի տեղայնացումը, ինչը հնարավորություն կտա կրթության բովանդակության համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին և սովորողների շարժունությանը՝ սահմանված նաև քոլեջի ռազմավարական նպատակներում: Այս նպատակով փորձագիտական խումբը հատկապես շեշտադրում է դասավանդողների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումը և քոլեջի կողմից հնարավորությունների որոնումը տարաբնույթ աշխատաժողովների, մասնագիտական վերապատրաստումների մասնակցության տեսանկյունից:

Քոլեջում առկա են կրթական ծրագրերի գնահատման որոշ մեխանիզներ, որոնք նախանշում են ծրագրերում փոփոխությունների իրականացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համահունչ կրթական ծրագրեր ապահովելու համար քոլեջը անհրաժեշտություն ունի բարելավելու ծրագրերի պարբերական գնահատման մեխանիզմները, ինչը թույլ կտա կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքի որակի վերահսկում և գնահատում իրականացնել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի կրթական ծրագրերը բխում են ՊԿՉ-ներից, համահունչ են քոլեջի առաքելությանը, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների,

շարունակաբար բարելավվում են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդները, ունի ծրագրերի գնահատման որոշակի մեխանիզմներ և փոփոխությունները կրում են պարբերական բնույթ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԵՀԲՔ-ն, հիմք ընդունելով ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, այն տեղայնացրել և մշակել է՝ «ՀՀ միջին մասնագիտական առկա ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացնող պետական բժշկական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»-ը: Քոլեջում ընդունելությունն իրականացվում է կանոնակարգի համաձայն: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի կողմից մշակված կարգը յուրաքանչյուր տարի ենթարկվում է լրամշակման, որը պայմանավորված է ՀՀ ԿԳ նախարարի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» №254-Ն հրամանում տեղի ունեցող փոփոխություններով: Ընդունելությունն իրականցվում է «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա: Ինքնավերլուծության համաձայն՝ ընդունելության պայմանների վերաբերյալ տպագրվում են պաստառ-հայտարարություններ: Օտարերկրացի ուսանողների ընտրությամբ ընդունելությունը և կարող է լինել քոլեջի կողմից մշակված կարգի համաձայն, և ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: 2019 թվականին քոլեջ են ընդունվել 39-ը, 2020թ.՝ 12, իսկ 2021թ.՝ 29 օտարերկրյա ուսանողներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պատասխանատուն աշխատակիցների, ուսանողների, այդ թվում նաև ՈՒԽ անդամների և շրջանավարտների հետ ուսանողների հավաքագրման նպատակով շրջում են Երևանի և մարզերի դպրոցներում, տրամադրում են բուկլետներ: Ինքնավերլուծության համաձայն՝ մասսայական լրատվական միջոցներով լուսաբանվում է ընդունելության կարգը, մասնագիտությունների ցանկը, ուսման վարձաչափերը, պահանջվող փաստաթղթերը և այլն: Դիմորդների դիմում-հայտերը և փաստաթղթերը ընդունվում են հեռավար եղանակով, այս և այլ մանրամասներ տեղադրվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում, շահակիցներին հասանելի է նաև քոլեջի էլ. հասցեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջի մասին տեղեկացել են՝ ավագ ընկերներից,

հարազատներից և սոցիալական ցանցերից։ ԵՀԲՔ-ի կողմից դիմորդների և վերջիններիս ծնողների իրազեկվածությունն ապահովելու նպատակով կազմակերպվում են հանդիպումներ, որոնք վերաբերում են քոլեջի պատմությանը, ընդունելության կարգին, ուսումնառության պայմաններին, գործող մասնագիտություններին, նրանց արդիականությանը և այլն։ Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ գործարկվել է քոլեջի պաշտոնական կայքէջը։

ԵՀԲՔ-ի որակի ապահովման պատասխանատուի և մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից քոլեջում պարբերաբար իրականացվում են հարցումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները առաջին իսկ կուրսից մասնակցել են հարցումների։ Հարցաշարի միջոցով ուսանողները գնահատել են գրքերի վիճակը, քոլեջի լսարանների վիճակը (1-5 բալային սանդղակով), հնարավորություն են ունեցել նշել իրենց առաջարկությունները և այլն։ Որպես առաջարկություն ուսանողների կողմից նշվել են՝ կայքէջի ստեղծումը, մարզադահլիճի վերանորոգումը և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն այլևս ունի կայքէջ և վերանորոգվել է մարզադահլիճը։

Ինքնավերլուծության համաձայն՝ ԵՀԲՔ-ը կրթական կարիքների ուսումնասիրության, դրանց վերհանման և բավարարման ուղղությամբ պարբերաբար իրականացնում են աշխատանքներ, այդ թվում նաև ուսանողներն ազատ են իրենց խնդիրների վերաբերյալ դիմելու քոլեջի տնօրենին, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին, ամբիոնների և բաժինների վարիչներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կրթական կարիքերը բարձրաձայնելու նպատակով կուրսի ավագի միջոցով դիմում են ամբիոնի վարիչին կամ բաժնի վարիչին։ Ուսանողները նաև ընդգրկված են կառավարման և տնօրինական խորհուրդներում և ունեն հնարավորություն խնդիրները բարձրացնելու, ինչպես նաև տարբեր առաջարկներ ներկայացնելու։ Ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ ակտիվ գործունեություն է ծավալում նաև ուսանողական խորհուրդը։ ՈւԽ-ն հանդիպումներ է կազմակերպում ուսանողների հետ։ Ունի բաժնի պատասխանատուներ, ովքեր իրենց բաժնի ուսանողների խնդիրները բարձրացնում և քննարկում են ՈւԽ-ում։

Ինքնավերլուծության համաձայն՝ ԵՀԲՔ-ում խորհրդատվություններ իրականացնելու համար ուսումնական մասի կողմից կազմվում է ժամանակացույց, համաձայն որի ամբիոնների կողմից մատուցվում են պարտադիր խորհրդատվական ծառայություններ՝ ընթացիկ քննություններից և պետական ատեստավորումից առաջ դասավանդողները ուսանողների հետ անցկացնում են խորհրդատվություններ՝ նրանց կողմից առաջադրված թեմաների և հարցերի շուրջ։ Խորհրդատվությունների ժամանակացույցները փակցվում են ցուցատախտակներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատվությունները սկսել են իրականացնել՝ ուսանողների առաջարկությունների վրա հիմնվելով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպվել են անվճար նախապատրաստական դասընթացներ ընդունելության քննություններից առաջ «Կենսաբանություն» առարկայից միջնակարգ և հիմնական կրթությամբ դիմորդների համար։

ԵՀԲՔ-ում ուսանողների համար պարտադիր պայման է լրացնել բաց թողնված դասերը՝ անկախ բացակայության պատճառից յուրաքանչյուր մոդուլի կամ առարկայի գծով յուրացնելու ուսումնական ծրագրի ամբողջ ծավալը: Յուրաքանչյուր բաց թողած թեման ուսանողը պարտավոր է լրացնել դասերից հետո՝ լրացուցիչ պարապմունքների ընթացքում, որոնք իրականացվում են խմբակային կամ անհատական կարգով (3 ակադեմիական ժամ տևողությամբ): Ըստ ինքնավերլուծության՝ այս գործընթացը կազմակերպվում և վերահսկվում է ուսումնական մասի, ամբիոնների, բաժինների վարիչների, մեթոդիստի, պրակտիկայի բաժնի կողմից: Այս դասընթացների լրացումը դասախոսների ծանրաբեռնվածության մեջ է ներառվում՝ ըստ որի նրանք լրացուցիչ վճարվում են ուսանողների հետ անցկացվող պարապմունքների համար: Ամբիոնի վարիչները յուրաքանչյուր ամսվա վերջում կազմում են հաջորդ ամսվա բացակայությունների լրացման դասախոսների հերթապահությունների ժամանակացույցը, որը փակցվում է ուսանողներին հասանելի վայրում: Ինքնավերլուծության համաձայն՝ պրակտիկաներից բացակայությունները լրացվում են կլինիկական բազաներում նույն հիմունքներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անհարգելի բացակայությունների դեպքում ուսանողները վճարում են դրանք լրացնելու համար:

Ուսանողների օժանդակության և ուղղորդում տրամադրելու նպատակով քոլեջում գործում է հստակ կանոնակարգ և ժամանակացույց: ԵՀԲՔ-ում առկա է «ԵՀԲՔ-ի ուսանողների բողոքների դիտարկման կարգ», ըստ որի իրականացվում է ուսանողների՝ վարչական անձնակազմին դիմելու գործընթացը: ԵՀԲՔ-ում կանոնակարգված է տնօրենի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ ուսանողների հաղորդակցման գործընթացը: Ըստ ժամանակացույցի յուրաքանչյուր օր ժամը 8^{30}-14^{00} ուսանողները կարող են դիմել տնօրենին, իսկ 14^{00}-19^{00}-ն՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին: Ամբիոնի վարիչներին և բաժնի վարիչներին ուսանողները կարող են դիմել ցանկացած ժամի:

Քոլեջի խորհրդի կողմից հաստատվել է նաև «Ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման և վերահանձնման կարգ»-ը, որի համաձայն կարգավորվում են գնահատականի հետ անհամաձայնության բողոքարկման, չգնահատված և անբավարար գնահատված ուսանողների ակադեմիական պարտքերի վերահանձնման և գնահատականների վերահանձնման հարցերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բողոքարկման ժամանակ ուսանողներին ներկայացվում է այն թերացումները ինչի արդյունքով գնահատականը ցածր է ստացվել:

ԵՀԲՔ-ն ունի կարիերայի ուղղորդման պատասխանատու, ով ապահովում է կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցումը ուսանողներին, նպաստում է ուսանողների կարիերայի նախապատրաստմանը, աջակցում է նրանց աշխատատեղերի որոնման, մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ստեղծման հարցում, ապահովում է շրջանավարտների ինքնուրույն մուտքն աշխատաշուկա, ուսումնասիրում է գործատուների գոհունակության աստիճանը շրջանավարտների մասնագիտական մակարդակի և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը կազմակերպում է կլոր սեղան քննարկումներ գործատուների հետ:

Կարիերայի ուղղորդման կենտրոնն ունի ֆեյսբուքյան էջ, որի միջոցով պարբերաբար տեղադրվում են թափուր աշխատատեղերի և իրականացվելիք հանդիպումներին, միջոցառումներին, ցուցահանդեսներին մասնակցելու վերաբերյալ հայտարարություններ, ինչպես նաև փակցվում են հայտարարությունների ցուցատախտակին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը այցելել է լսարաններ և ուսանողներին տեղեկացրել և իր աջակցությունն առաջարկել, որ աշխատանքի տեղավորման կամ այլ հարցերով կարող են ուսանողները դիմել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուն կապվում է շրջանավարտների հետ և տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին:

2019 թվականից ԵՀԲՔ-ում առկա է ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալների բազա: Փորձագիտական այցից պարզվեց, որ կարիերայի կենտրոնը սերտ համագործակցում է որակի պատասխանատուի և ՈւԽ-ի հետ: Տարեցտարի ավելանում է ուսանողների կապը կարիերայի պատասխանատուի հետ: Կարիերայի կենտրոնը կազմակերպում է սեմինարներ՝ տարբեր թեմաներով (CV-ի կազմում, հարցազրույցներին մասնակցություն և այլն):

ԵՀԲՔ-ն ունի հետազոտությունների իրականացման և զարգացման վերաբերյալ մշակած «Ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգ»: Ուսանողները տարբեր թեմաների վերաբերյալ գրում են ռեֆերատներ, ապա դրանք ներկայացնում են դասընթացի ժամանակ, երբեմն նաև՝ սահիկաշարի կիրառմամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրած թեմաների հիման վրա ուսանողները պատրաստում են նաև պաստառներ:

Այցից պարզ դարձավ, որ ուսանողներին առաջարկվում է ընտրել թեմաներ ռեֆերատ գրելու համար, որտեղ հաշվի են առնվում ուսանողի վերլուծական հմտությունները և ստեղծագործական մտածողությունը: Հետազոտական բաղադրիչի ապահովման նպատակով հանձնարարված ռեֆերատների շրջանակներում ուսանողները կարող են օգտվել նաև լաբորատորիաներից: Ռեֆերատիվ աշխատանքների իրականացումը քոլեջում խրախուսվում է բոլոր կրթական ծրագրերում, թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև ուսանողների հետաքրքրությունները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների վերլուծական կարողությունների զարգացման նպատակով քոլեջն ուսանողներին խրախուսում է մասնակցել տարբեր կոնֆերանսների: Օրինակ՝ «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները դասավանդողի ղեկավարությամբ մասնակցել են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից կազմակերպված «Առանց դեղատոմսի տրվող դեղեր. տեսությունից պրակտիկա» 2-օրյա տեսաժողովին՝ ստանալով վկայականներ: Քոլեջում կազմակերպել են նմանատիպ գիտաժողով՝ «Հակաբիոտիկները կիրառել պատշաճ» թեմայով:

Ինքնավերլուծության համաձայն՝ ԵՀԲՔ-ում ներդրվել է «Առարկայական խմբակների աշխատանքների ընթացակարգ»-ը, ըստ որի՝ քոլեջում իրականացվում են արտալսարանային ժամերին գործող առարկայական խմբակներ, որոնց անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ուսանող՝ կամավորության սկզբունքով: Առարկայական խմբակների նպատակը՝ ուսանողների կողմից հետազոտությունների իրականացման խթանումն է: Օրինակ՝ հետազոտության խթանման համար՝ միջամբիոնային

համագործակցությամբ «Բենզոլներ» թեմայի վերաբերյալ հետազոտություն են ներկայացրել:

ԵՀԲՔ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար առաջնային պատասխանատու մարմինը ուսանողական խորհուրդն է: Ինքնավերլուծության համաձայն ՈւԽ-ն իր գործունեությունն իրականացնում է 2018 թվականի հաստատված կանոնակարգի համաձայն: ՈւԽ-ի միջոցով ուսանողությանն առնչվող հարցերը, բողոքները և առաջարկությունները ներկայացվում են քոլեջի խորհրդին, տնօրինական խորհրդի նիստերին, որի 4 անդամը ՈւԽ-ի ներկայացուցիչներն են: ՈւԽ-ն ունի նաև համակարգող, ում հետ քննարկվում են ապագայում իրականացվելիք ծրագրերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ նախագահը և փոխնախագահները ուսումնական տարվա սկզբին տարբեր խմբերով շրջում են քոլեջում և ներկայացնում են ՈւԽ-ն, նրա գործառույթները և ցանկացողներին առաջարկում են լրացնել ցանկության հայտը: ՈւԽ անդամ լինելու համար, նախ ցանկություն հայտնած ուսանողի հետ հարցազրույց է իրականացվում, ապա ցանկացող ուսանողները մեկ կիսամյակ անցնում են փորձաշրջան և ըստ իրենց կատարած աշխատանքի արդյունքի ՈւԽ նիստի ժամանակ որոշում է կայացվում, արդյոք ուսանողին ընդգրկել ՈւԽ կազմում թե ոչ: Իսկ կուրսի ավագները ավտոմատ կերպով համարվում են ՈւԽ անդամ:

Յուրաքանչյուր կրթական ծրագրում կան բաժնի պատասխանատուներ, ովքեր ավագների հետ սերտ համագործակցության մեջ են:

ՈւԽ-ն չունի առանձին բյուջե, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ ցանկացած հարցով դիմում է տնօրինությանը և աջակցություն է խնդրում: Օրինակ՝ ՈւԽ անդամների համար բեյջեր տպելու, ՈւԽ սենյակի վերանորոգման, ՈւԽ-ին համակարգիչ տրամադրելու հարցերով դիմել է տնօրինությանը և աջակցություն է ստացել:

ՈւԽ-ն ունի փաստաթղթային արխիվ, յուրաքանչյուր նիստի ժամանակ արձանագրություններ են կազմվում: ՈւԽ-ն քոլեջում տարբեր սեմինարներ է կազմակերպում, կապված ակադեմիական ազնվության, ռեֆերատներում հղումների առկայության վերաբերյալ, որոնք սահիկաշարով ներկայացրել են տարբեր խմբերի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները, երբ ունենում են տարբեր միջոցառումների մտքեր, դիմում են ՈւԽ-ի օգնությանը, վերջինս զբաղվում է դրա կազմակերպմամբ: Օրինակ՝ «Անկախություն անկախության գնով» միջոցառումը դասախոսի առաջարկով է կազմակերպվել:

Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատումը կատարվում է տարբեր ուսանողների շրջանում կատարված հարցումների, բաժինների վարիչների հաշվետվությունների, արտաքին շահակիցների, շրջանավարտների կարծիքների, դասալսումների արդյունքների հիման վրա: Որոնց վերլուծությունների հիման վրա էլ իրականացվում են խրախուսման գործընթացներ: Օրինակ՝ ավարտական կուրսերի այն ուսանողները, ովքեր նախորդ տարիներին անընդմեջ ունեցել են բացարձակ գերազանց առաջադիմություն և ցուցաբերել են հասարակական ակտիվություն, պատշաճ վարքագիծ, արժանանում են «Գարեգին Նժդեհ»-ի անվան ներքոլեջային կրթաթոշակի, վկայականի և շքանշանի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Գարեգին Նժդեհ»-ի անվան կրթաթոշակը տրվում է յուրաքանչյուր բաժնից մեկ ուսանողի՝ բացարձակ գերազանցության և կարգապահության համար,

սակայն այս ուստարում չափանիշներին համատասխանող ուսանողների թիվն ավելի մեծ է եղել, և քոլեջը կրթաթոշակը հատկացրել է ավելի մեծ թվով ուսանողների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին մատուցվող ոչ բոլոր ծառայություններն են պարբերաբար գնահատվում քոլեջի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՀԲՔ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման կանոնակարգեր և մեխանիզմներ: Ողջունելի է նաև այն, որ դիմորդների ներգրավմանն ուղղված աշխատանքները ակտիվ կերպով են ընթանում, ինչը նպաստում է դիմորդների շրջանում քոլեջի վերաբերյալ հետաքրքրվածության ավելացմանը և դիմորդների թվի շարունակական աճին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ կրթական կարիքների ուսումնասիրության, դրանց վերհանման և բավարարման ուղղությամբ պարբերաբար իրականացնում են աշխատանքներ: Դրական է նաև ուսանող-ամբիոնի վարիչ, ուսանող-բաժնի վարիչ սերտ համագործակցությունը, ինչը հանգեցնում է ուսանողների խնդիրների վերհանմանը և համապատասխան արձագանքին ինչպես դասավանդողների, այնպես էլ վարչական անձնակազմի կողմից:

Դրական է համարվում, որ պարբերաբար անցկացվում են հարցումներ, և դրանց վերլուծության արդյունքում լուծվում են որոշակի խնդիրներ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում իրականացվում են խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքներ և առկա է հստակ ժամանակացույց: Դրական է համարվում, որ բացակայությունների հետևանքով ուսումնական նյութը բաց թողած ուսանողները պարտադիր կերպով և հստակ ժամանակացույցով լրացնում են բացթողումները, որը նպաստում է ուսանողների առաջընթացին և սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում կարիերայի կենտրոնի առկայության փաստը, այդուհանդերձ, գտնում է, որ շրջանավարտների հետ հետադարձ կապի առավել գործուն մեխանիզմների կիրառումը կնպաստի շրջանավարտների կարիքների պարբերաբար վերհանմանը և բարելավման հետագա ուղիների դուրսբերմանը: Դրական է նաև այն, որ կարիերայի կենտրոնը սերտ համագործակցում է որակի պատասխանատուի և ՈւԽ-ի հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կարիերայի կենտրոնի աշխատանքների շնորհիվ ապահովվում է՝ կարիերայի կենտրոն-ուսանող և ուսանող-գործատու փոխհամագործակցությունը: Փորձագիտական խումբը կարևոր հանգամանք է համարում քոլեջի պաշտոնական կայքէջի գործարկումը, ինչը խոստումնալից է տեղեկատվության հասանելիության, հաշվետվողականության ապահովման և այլ առումներով:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև հետազոտական բաղադրիչի ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչը կնպաստի ուսանողների մոտ վերլուծական հմտությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ Ուսանողական խորհուրդը, որը ներգրավված է քոլեջում առկա բոլոր գործընթացներում,

ինչպես նաև իրականացնում է աշխատանքներ, որոնք ուղղված են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը: ՈՒԽ-ն հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով և մասնակցություն է ունենում կազմակերպչական բոլոր աշխատանքներում:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այս մեխանիզմների՝ բոլոր ոլորտներում կիրառվելը կարող է նպաստել մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալուն՝ հատկորոշելով զարգացման հետագա ընթացքը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՀԲՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, սովորողներն ունեն հնարավորություն բարձրաձայնելու իրենց կրթական կարիքների մասին, դասավանդողները և վարչական աշխատակիցները մշտապես հասանելի են ուսանողների համար, ներդրվել են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, ինչպես նաև քոլեջը փորձում է ուսանողներին ներգրավել վերլուծական աշխատանքներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի հենակետային բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջն իր 2018-2023 թվականների զարգացման ռազմավարական նպատակ է սահմանել որակավորված, նվիրված և մարդկային բարձր հատկանիշներով օժտված, բարձրորակ դասավանդողների ներգրավումը: Ըստ այդմ էլ՝ քոլեջի 2020-2023 թվականների զարգացման միջնաժամկետ ծրագրում որպես ուղղություն սահմանված է դասախոսամանկավարժական անձակազմի որակի բարձրացումը, որը նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերով՝ քոլեջի անձնակազմի համալրում երիտասարդ մասնագետներով, շարունակական կատարելագործման հնարավորությունների և ժամանակակից ու բարենպաստ միջավայրի ստեղծում, դասախոսների աշխատավարձի բարձրացում, երեք տարին մեկ անգամ աշխատակիցների ատեստավորում, լավագույն դասախոսների խրախուսում, որոնց իրականացման պատասխանատուները հաստատության տնօրենը և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն են: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տարիներին կատարվել է դասախոսների աշխատավարձերի որոշակի բարձրացում, դասախոսները ըստ կատարած

աշխատանքի խրախուսվել են շնորհակալագրերով և պարգևավճարներով, մասամբ բարելավվել է աշխատանքային միջավայրը:

Քոլեջի աշխատողների աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման կարգը սահմանված է «Ներքին կարգապահական կանոններ»-ում, իսկ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանված են պաշտոնի անձնագրերում: Թափուր աշխատատեղերի համալրումը անցկացվում է համաձայն «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի, որը հաստատված է 2021 թվականի հոկտեմբերի 5-ին: Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Քոլեջի բոլոր ամբիոնների կողմից նախապես կազմվում են առաջադրանքներ, որոնք առնչվում են դասավանդվող առարկային/մոդուլին և մանկավարժական գործունեությանը: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասավանդող կազմը համալրելիս կարևորվում են և՛ մասնագիտական գիտելիքները, և՛ մանկավարժական հմտությունները, որոնցով էլ պայմանավորված են մրցույթի համար նախատեսված հարցաշարերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասավանդող անձնակազմի ընտրության կարևոր չափանիշը մասնագիտական որակների համապատասխանությունն է ՄԿԾ-ով նախանշված ուսումնառության արդյունքներին, իսկ համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով դասավանդող կազմը ընտրվում է ոլորտի առաջատար մասնագետների շրջանակից: Համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով քոլեջում աշխատում են նաև գործատու կազմակերպություններից դասավանդող մասնագետներ և պրակտիկայի ղեկավարներ: Վարչական և ուսումնաօժանդակ կազմը նշանակվում և ազատվում է տնօրենի կողմից՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Քոլեջն ունի «Դասախոսական կազմի մասնագտական որակներին ներակայացվող պահանջները՝ ըստ ՄԿԾ-ների» փաստաթուղթ՝ մշակված 2021 թվականի հունիսի 4-ին, որում սահմանվում է, որ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պիտի ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն կամ ոլորտում աշխատանքային փորձ:

Քոլեջի ռազմավարական խնդիրներց է մանկավարժադասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների պարբերական գնահատման չափանիշների և մեխանիզմների ստեղծումը: Դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի վերահսկումն իրականացվում է դասալսումների միջոցով: Դասալսումներն իրականացվում են բաժինների վարիչների, որակի պատասխանատուի, ուսումնական և ուսումնաարտադրական աշխատանքների գծով փոխտնօրենների, ամբիոնների վարիչների կողմից՝ համաձայն իրենց տարեկան աշխատանքային պլանների: Դասալսումներն իրականացվում են նախապես սահմանված ժամանակացույցով, որոնք կազմակերպվում են և՛ սկսնակ դասախոսների, և՛ երկարամյա փորձ ունեցող դասավանդողների մոտ: Դասալսումների արդյունքների հիման վրա նշվում են համապատասխան առաջարկները և դիտողությունները, անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպվում են կրկնակի դասալսումներ, իսկ դասավանդման լավագույն փորձը տարածվում է ամբիոնների նիստերի ժամանակ: Այցից պարզ դարձավ, որ դասալսումները

հնարավորություն են տալիս նաև վեր հանել այն դասախոսների տվյալները, որոնք ունեն մանկավարժամեթոդական վերապատրաստման կարիք: Նրանց աջակցություն տրվում է մեթոդիստի կողմից կամ էլ ընդրգկվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից վերապատրաստման դասընթացներին:

Դասախոսների գործունեության գնահատում իրականացվում է նաև որակի կենտրոնի կողմից՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցաթերթիկի միջոցով: Քոլեջը կազմակերպել է դասավանդողների մեկանգամյա ատեստավորում՝ մասնագիտական գիտելիքների գնահատման նպատակով, սակայն այն պարբերական բնույթ չի կրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից դասախոսների գործունեության գնահատման համար դիտարկվում են նաև պետական ատեստավորող հանձնաժողովների, պրակտիկայի ղեկավարների և գործատուների արձագանքները ուսանողների գիտելիքների վերաբերյալ, ուսանողների հաջողությունները: Հարկ է նշել, որ դասավանդող կազմի գործունեության գնահատման մեխանիզմները դեռևս ամբողջովին չեն արտահայտում դասախոսական կարիքները:

Քոլեջն իրականացնում է դասավանդողների մասնագիտական զարգացման, կատարելագործմանն ուղղված որոշակի գործընթացներ՝ ամբիոնային և միջամբիոնային միջոցառումներ, ձեռնարկների տպագրման խրախուսում, սեմինարներ, կոնֆերանսներ, խորհրդատվություններ: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերապատրաստումները հիմնականում կրում են մանկավարժամեթոդական բնույթ, մասնագիտական վերապատրաստումները պարբերական չեն: Ոլորտային նորարարություններին, կիրառվող նոր տեխնոլոգիաներին քոլեջի դասավանդողները ծանոթանում են պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների, պրակտիկաների ղեկավարների հետ հաղորդակցության, գործատուների հետ կազմակերպվող հանդիպումների շրջանակում: Միջազգային վերապատրաստումներին, վեբինարներին մասնակցությունը ևս սակավ է՝ պայմանավորված դասախոսական համակազմի լեզվաիմացության պակասով, երբեմն նաև ֆինանսական հանգամանքներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդողները փորձի փոխանակում իրականացնում են բաց դասերի և սեմինարների միջոցով: Առկա են դեպքեր, մասնավորապես՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանակներում, երբ մասնագիտական վերապատրաստումներ անցնող դասախոսները իրենց փորձով և գիտելիքով կիսվում են գործընկերների հետ ամբիոնների նիստերի և քննարկումների ժամանակ:

Դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանումն իրականացվում է ամբիոնների և բաժինների նիստերում, որտեղ անձնակազմը ներկայացնում է իր կարիքները, առաջարկները հավաքագրվում են ամբիոնների և բաժինների վարիչների կողմից և ներկայացվում տնօրինական խորհրդի նիստին: Քոլեջն ունի Խորհրդի կողմից 2020 թվականի օգոստոսի 31-ին հաստատված «Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն»: Ըստ այդմ, կարևորելով սկսնակ դասախոսների վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը, քոլեջում գործում է «Երիտասարդ դասախոսների դպրոց»-ը՝ մանկավարժական կրթություն չունեցող և միջին մասնագիտական կրթությամբ դասավանդողների համար: Հարկ է նշել նաև, որ սկսնակ

դասավանդողների համար քոլեջում կազմակերպվում են սեմինարներ, որոնց կարող է մասնակցել ոչ միայն սկսնակ, այլ նաև ցանկացած դասավանդող, ով կարիք ունի մասնագիտական որոշ հմտությունների կատարելագործման, նոր գիտելիքների ձեռք բերման և դասավանդման նոր մեթոդների ձեռքբերման: Խորհրդի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 5-ին հաստատված «Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգ»-ում մանրամասն ներկայացված են մենթորության նպատակները, խնդիրները, իրականացման գործընթացը: Մենթորությունն իրականացվում է ամբիոնների շրջանակներում, սկսնակ դասավանդողներին աջակցում են փորձառու, երկարամյա աշխատանքնային փորձ ունեցող դասավանդողները՝ դասալսումների և խորհրդատվությունների միջոցով:

Մասնագիտական առաջընթացի ապահովման կարևոր միջոց են հանդիսանում նաև ամբիոնների դասավանդողների տպագրված շուրջ 73 անուն ուսումնական ձեռնարկները և դասագրքերը, որոնք տրամադրվել են նաև հանրապետության մյուս միջին մասնագիտական պետական բժշկական ուսումնական հաստատություններին: Այցից պարզ դարձավ, որ ձեռնարկների տպագրումն ու վերահրատարակումը կազմակերպվում է քոլեջի միջոցների շնորհիվ, սակայն ֆինանսական միջոցների սղությունը հնարավորություն չի տալիս վերահրատարակումները կազմակերպել առավել հաճախ:

Քոլեջի ռազմավարական խնդիրների շրջանակում են դասավանդողների գործունեությունը խթանող միջոցների բարելավումը: Քոլեջն ունի «Երկարամյա աշխատանքի և ծառայության կամ ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար աշխատողների խրախուսման հիմնական սկզբունքները, կադրային գործավարության հիմնական առանձնահատկությունները, իրավական փուլերը, փաստաթղթերի տեսակները և փաստաթղթային ձևակերպումները» ընթացակարգ, որը հաստատված է 2021 թվականի հոկտեմբերի 5-ին: Ընթացակարգը սահմանում է աշխատողների նկատմամբ խրախուսման ձևերը/շնորհակալագիր, միանվագ դրամական պարգևատրում, լրացուցիչ վճարովի արձակուրդ, հուշանվեր, կարգապահական տույժի հանում/, փուլերը: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ խրախուսման ձևերը կիրառվում են՝ հաշվի առնելով դասավանդողների բարեխիղճ աշխատանքը, կազմակերպած բաց դասերը, միջոցառումները, աշխատանքային պարտականությունների գերազանց կատարումը: Որպես խրախուսման հիմնական ձևեր կիրառվում են շնորհակալագրերը, բարոյական խրախուսումները, լրավճարները, որոնք կրում են պարբերական բնույթ:

Հաստիքացուցակը հաստատելիս քոլեջը առաջնորդվում է 2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից սահմանված ղեկավար աշխատողների վարչատնտեսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի օրինակելի հաստիքացուցակով, սակայն քոլեջը իր կարքիներին համապատասխան պահապանել է ամբիոնի վարիչի հաստիքը՝ գործառույթային լրավճարով՝ լիազոր մարմնին ներկայացրած համապատասխան հիմնավորումներից հետո, թեև նախկինում գործող 14 ամբիոնները միավորման սկզբունքով վերակազմավորվել են 7 ամբիոնի:

Քոլեջի դասավանդողների 83%-ը հիմնական, 5%-ը՝ համատեղությամբ, 12%-ը ժամավճարային աշխատողներ են: Քոլեջում աշխատում է գիտական աստիճան ունեցող ընդամենը 4 դասախոս: Քոլեջն ունի հաստիքացուցակով նախատեսված անհրաժեշտ փորձ

ունեցող աշխատակազմ՝ վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող աշխատող: Հաստիքային անձնակազմից 17-ը համարվում են ներքին համատեղությամբ աշխատողներ: Միևնույն ժամանակ առկա է դասավանդողների որոշակի հոսունություն՝ ավելի բարձր աշխատավարձով վայր տեղափոխվելու պատճառով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը հիմնականում ապահովված է անհրաժեշտ կազմով, ինչպես նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմը բավարար է աշխատանքների իրականացման համար:

Ստորաբաժանումների աշխատանքներից սովորողների գոհունակությունը պարզելու նպատակով քոլեջի որակի պատասխանատուի կողմից իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում: Սովորողները գնահատել են տնօրինության, ուսումնական մասի, բաժնի վարիչների, ամբիոնների, որակի պատասխանատուի, կարիերայի պատասխանատուի, հաշվապահության, գրադարանի, բուժկետի, մարզադահլիճի աշխատանքները՝ հիմնականում բարձր գոհունակություն հայտնելով վերջիններիս աշխատանքներից: Արդյունքում բարելավվել է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության նյութատեխնիկական բազան, կատարվել են վերանորոգումներ, ձեռք է բերվել նոր համակարգչային տեխնիկա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ձգտում է մրցույթի միջոցով հավաքագրել քոլեջին անհրաժեշտ ու որակյալ դասախոսական կազմ, որը նպաստում է ուսանողների մոտ սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը դասավանդման գործընթացում ներգրավում է նաև գործատուների և պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների, որոնք նպաստում են ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև փորձի փոխանակման հարթակ են ստեղծում այլ դասախոսների համար ոլորտի նորարություններին ծանոթանալու տեսանկյունից:

Դրական է, որ քոլեջը սահմանել է դասավանդողներին ներկայացվող պահանջները՝ շեշտադրելով պրակտիկ ոլորտում փորձառությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ կրթական ծրագրերում դասախոսներին ներկայացվող պահանջների հստակեցումը կնպաստի հավաքագրման գործընթացի թափանցիկության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում փորձ է արվում շարունակաբար գնահատել դասախոսների կարիքները և ըստ վերհանված կարիքների՝ կատարել կատարելագործման աշխատանքներ: Դրական է, որ պարբերաբար իրականացվող հանդիպումների, ներամբիոնային և միջամբիոնային քննարկումների արդյունքում կատարվում են փորձի փոխանակումներ, սակայն մասնագիտական պլանավորված վերապատրաստումները կնպաստեն դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և ոլորտի զարգացումները կրթական գործընթացում ներառելուն: Միևնույն ժամանակ, ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրությունը, միջազգային աշխատաժողովների մասնակցությունը նույնպես կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է քոլեջին քայլեր ձեռնարկել դասախոսների և ուսումնաօժանդակ ու վարչական կազմի անգլերենի

իմացության բարձրացման ուղղությամբ, որը կնպաստի միջազգային փորձի առավել համապարփակ ուսումնասիրմանը և ուսումնական գործընթացում տեղայնացմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է Երիտասարդ դասախոսների դպրոցի առկայությանը մանկավարժական կրթություն չունեցող դասախոսներին աջակցելու տեսակետից: Կազմակերպվող միջոցառումները նպաստում են սկսնակ դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է երիտասարդ կադրերով համալրումը և դասախոսների աշխատավարձի բարձրացումը, որը կայունության համար հիմքեր է ստեղծում: Դրական է, որ առկա է դասախոսների ռեզերվ, որը հնարավորություն կտա կատարել ռիսկային իրավիճակներում դասախոսների փոխարինումներ:

Դրական է, որ քոլեջը ձգտում է ապահովել վարչական և ուսումնաօժանդակ կազմ իր ռազմավարական առաջնահերթություններն իրականացնելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը պարբերաբար իրականացնում է դասախոսների ընտրության քաղաքականության, վերջիններիս աջակցման, կարիքների վերահանման, գործունեության գնահատման մեխանիզմների և ընթացակարգերի բարելավում, կարևորում է անձնակազմի համալրումը երիտասարդ և բանիմաց մասնագետներով, ներգրավում է ոլորտի պրակտիկ դասավանդողների, մշակում և իրականացնում է դասավանդող կազմի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև կարևորում է վարչական ծառայությունների մատուցման որակի բարձրացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Երևանի հենակետային բժշկական քոլեջն իր ռազմավարական ծրագրում կարևորել է գիտամեթոդական պայմանների ստեղծումը քոլեջի կայուն զարգացման համար: Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջում հետազոտական գործունեության իրականացումը և կապը ուսումնառության հետ ապահովում են ամբիոնները, քոլեջի և հիվանդանոցների լաբորատորիաները, որտեղ ուսանողները համատեղում են ուսումնական գործընթացը հետազոտական աշխատանքների հետ, կատարում են լաբորատոր աշխատանքներ՝ օգտագործելով առկա բժշկական սարքավորումները: Գիտական կոչում ունեն քոլեջի սակավաթիվ դասախոսներ, սակայն քոլեջի աշխատակիցները ներգրավված են կենսաբժշկական ոլորտի ուսումնամեթոդական

ձեռնարկների, դասագրքերի մշակման մեջ. տպագրվել է շուրջ 73 անուն ուսումնամեթոդական ձեռնարկ և դասագիրք հիմնականում քոլեջի ֆինանսական միջոցների հաշվին: Տպագրված գրականությունը տրամադրվել է նաև Հանրապետության մյուս միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատություններին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տասը տարում տպագրել է 11 ձեռնարկ, քոլեջը պլանավորում է դրանց թարմացումը, արդիականացումը և վերահրատարակումը: Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում, Քոլեջի աշխատանքային խմբի կողմից մշակվել են «Ընտանեկան բուժքրոջ գործնական ուղեցույցներ»-ի հատորներ, «Արաբկիր» ԲԿ-ի «Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ»-ի, ՄԱԿ-ի «Մանկական հիմնադրամ»-ի աշխատակիցների հետ համատեղ մշակվել և տպագրվել «Դեռահասների առողջություն և զարգացում», «Զարգացման և վերականգնողական մանկաբուժության հիմունքներ» ձեռնարկները: Հարկ է նշել նաև, որ ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ, թեմատիկ քննարկումներ: Որոշ դասախոսներ իրենց նախաձեռնությամբ տեղական պարբերականներում տպագրում են որոշ հոդվածներ, մասնակցում տարբեր կոնֆերանսների:

Քոլեջի կարճաժամկետ ծրագիրը արտացոլված է ուսումնական տարվա աշխատանքների համալիր և ամբիոնների վարիչների աշխատանքային պլաններում, որտեղ նախօրոք պլանավորվում է ուսանողների հետազոտական, ստեղծագործական աշխատանքների կազմակերպումը: Եռամյա զարգացման պլանի Նպատակ 3-ում սահմանված ենթագործողություններ, մասնավորապես ուսանողներին մասնակից դարձնել հետազոտություններին՝ ապահովելով համապատասխան կարողությունների ձևավորումը, ինչպես նաև նպաստել հետազոտական գործունեության որակի ապահովմանը, կազմակերպել ուսանողների հետազոտական աշխատանքները, ակտիվացնել առարկայական խմբակների աշխատանքները:

Քոլեջն ունի հետազոտությունների իրականացման և զարգացման վերաբերյալ մշակած և Խորհրդի կողմից հստատված «Ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգ»: Կանոնակարգի խնդիրներից է գիտելիքի պաշարն ավելացնելուն ուղղված համակարգված ստեղծագործական աշխատանքի կատարումը: Առկա է նաև «Ուսանողների հետազոտական գործունեության կազմակերպման կառուցվածքային սխեմա»-ն, որում ներկայացված են հետազոտական աշխատանքների կատարման հաջորդական քայլերը: Սակայն նշված քայլերը չեն ավարտվում ամփոփմամբ՝ եզրակացության ձևակեպմամբ: Փորձագիտական խումբը արձանագրել է նաև, որ քոլեջը պրակտիկայի ընթացքում ուսումնական և հետազոտական աշխատանքները կատարելու նպատակով ունի կնքված բազմաթիվ պայմանագրեր ՀՀ մի շարք կազմակերպությունների հետ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ըստ այդմ ստանում են առաջադրանքներ՝ իրականացնելու վերլուծական, ինքնուրույն աշխատանքներ:

Քոլեջում հետազոտական գործունեության միջազգայնացումը դեռևս իր վաղ զարգացման փուլում է գտնվում. առայժմ համատեղ աշխատանքներ կատարելու նպատակով պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում համագործակցություն է իրականացնում Բիշքեկի, Դուշանբեի բժշկական քոլեջների հետ: Փորձագիտական հանդիպումների ընթացքում նկարագրվեցին համագործակցության որոշ դեպքեր, ինչպես օրինակ՝ համագործակցությունը «Դեպի Հայք» հիմնադրամի, օտարերկրյա գործընկերների

հետ, որոնք ինտերակտիվ դասախոսություններով հանդես են եկել ֆիզիոթերապիայի, առաջին բուժօգնության և այլ թեմաներով: Քոլեջի անձնակազմի առանձին անհատներ իրենց նախաձեռնությամբ մասնակցում են հիմնականում ՀՀ–ում տեղի ունեցող միջազգային կոնֆերանսներին, սեմինարներին: Ըստ քոլեջի ներկայացուցիչների՝ ֆինանսական միջոցների սահմանափակումը, երբեմն նաև օտար լեզվի իմացության պակասը խոչընդոտում են միջազգային գիտական միջոցառումներին իրենց մասնակցելությունը:

Քոլեջի փաստաթղթային հենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաստատությունը կարևորում է ուսումնառության կապի ապահովումը հետազոտական գործունեության հետ և նրանց փոխկապակցված դերը: Ուսանողների հետազոտական գործունեությունը հիմնականում ապահովվում է կրթական ծրագրերի մոդուլներում տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների, սեմինարների, պրակտիկաների ընթացքում, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքների, առարկայական խմբակների ձևավորման միջոցով: Քոլեջում կազմակերպվում են մասնագիտական սեմինարներ, կոնֆերանսներ, մրցույթներ:

Կրթական ծրագրերի մոդուլներում գերակշռում է գործնական/լաբորատոր պարապմունքների ժամաքանակը, որոնց շրջանակներում ուսանողներին հաճախ տրվում են անհատական հանձնարարականներ, ապա ուսանողները հանդես են գալիս ռեֆերատներով, զեկույցներով կամ կազմում պաստառներ, ստենդներ: Այցի ընթացքում, ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների կողմից բերվեցին տարբեր մոդուլներում ինտերակտիվ ուսուցման մեթոդների՝ խնդրահարույց իրավիճակի լուծման, դերային խաղերի, իրավիճակային խնդիրների կիրառման օրինակներ: Այսպես օրինակ, որպես իրավիճակային խնդիր դիտարկվում է հիվանդի վախի զգացումը, և դրանից բխող սրտի զարկերի և ճնշման արժեքի դիտարկումը, որոնց հիման վրա ուսանողը պետք է ներկայացնի իր դիրքորոշումը, գործողությունների ալգորիթմը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը խրախուսում է նաև խմբային աշխատանքների իրականացումը: Այսպես օրինակ, ուսանողները տարբեր այրվածքների վերաբերյալ խմբային աշխատանք են իրականացնում, այրվածքի նկարը դիտարկում և դրա վերաբերյալ վերլուծություն են իրականացնում: Հարկ է նշել, որ Բիշքեքի քոլեջի հետ բենչմարքինգի արդյունքում «Դեղագործություն» ծրագրում փոքրիկ դեղատուն է ներդրվել, որտեղ ուսանողները դեղերի դասավորվածություն և ըստ ազդեցության մեխանիզմների դրանց դասակարգում են իրականացնում: Ավելին, դասի թեմայի շրջանակներում իրականացնում են դերային խաղեր որպես դեղատան «աշխատակից և հաճախորդ»: Այցի ընթացքում նշվեց, որ որպես անհատական հանձնարարականներ հաճախ տրվում են այնպիսի թեմաներ, որ ուսանողները նյութեր հավաքեն, ապա լսարանում ներկայացնեն: Օրինակ՝ ուսանողները բաժանվում են խմբերի, դեղաբույսերի որոշակի տեսակներ բաժանվում են խմբերին, նրանք առանձնացնում են տարբեր ազդեցությամբ դեղերը (միզամուղ, խորխաբեր և այլն), վերլուծում են դեղաբանական ազդեցությունները, հակացուցումները, դրանց կիրառումը և քննարկում:

Հետազոտության և ուսումնառության կապն ամրապնդելու նպատակով քոլեջում գործում են առարկայական խմբակները. ուսանողներին հանձնարարվում են թեմատիկ վերլուծական բնույթի աշխատանքներ տարաբնույթ հիվանդությունների,

դեղաբանական ազդեցության, պացիենտների հետ աշխատանքի վերաբերյալ: Առարկայական խմբակների աշխատանքները հիմնականում մեթոդիստն է համակարգում: Սակայն, ոչ բոլոր ուսանողներն են ներգրավված առարկայական խմբակներում. հիմնականում ընդգրկվում են նախաձեռնող և հետաքրքրված ուսանողները: Այդուհանդերձ, կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ այլ կարևոր հանգամանք է, որ դեռևս բավարար չափով ուշադրություն չի դարձվում ուսանողներին հետազոտական մեթոդների ծանոթացմանը, ինքնուրույն, անհատական աշխատանքներում մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականության համապարփակ կիրառմանը և աղբյուրների հիշատակմանը:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում ուսանողների կողմից հետազոտությունների իրականացման օրինակներ են նաև պրակտիկաների ընթացքում կատարված աշխատանքները: Հիդրոպոնիկայի ինստիտուտի հետ համագործակցության արդյունքում ուսանողները եռօրյա այցի ընթացքում դեղաբույսեր են դիտարկում, հերբարիումներ պատրաստում: Այսպիսով, փորձագիտական խումբը փաստում է, որ վերը նշված մոտեցումները զարգացնում են ուսանողների վերլուծական մտածողությունը: Այնուամենայնիվ, ոչ բոլոր մոդուլներում են ներդրված նման մոտեցումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի նպատակադրումները հետազոտական աշխատանքների խրախուսման և ուսանողների մոտ հետազոտական-վերլուծական հմտությունների զարգացման տեսանկյունից: Քոլեջում առկա են ուսումնական գործընթացի հետազոտական/վերլուծական աշխատանքների հետ զուգակցման որոշ մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խմբի գնահատմամբ հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները սահմանելիս քոլեջը հիմնականում դիտարկում է աշխատակիցների կողմից տարբեր ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրումն ու ուսանողների հետազոտական/վերլուծական մտածողությունը զարգացնող գործողությունները: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական աշխատանքներում (առարկայական խմբակներ, ռեֆերատների պատրաստում և այլն) բոլոր ուսանողների ներգրավումը և նման աշխատանքներրի պլանավորված ու համակարգված իրականացումը կնպաստի քոլեջի առջև դրված նպատակների իրականացմանը՝ պատրաստելու վերլուծական մտածողություն ունեցող միջին մասնագիտական կրթությամբ առողջապահության ոլորտի կադրեր:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջը կարևորում է ինքնուրույն, անհատական, խմբային աշխատանքների կատարումը, սակայն, վերլուծական կարողությունների ձևավորմանը միտված գործողությունների կանոնակարգումը կնպաստի ուսանողների մոտ մասնագիտական գրականությունից օգտվելու, համապատասխան հղումներ կատարելու, եզրահանգումներ իրականացնելու կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ուսանողների կողմից լաբորատոր փորձերի, գործնական աշխատանքների իրականացումը, և գտնում է, որ դրանց քանակի ու պարբերականության ավելացումը կնպաստի ուսանողների գործնական և հետազոտական

հմտությունների զարգացմանը: Գնահատման համակարգում հաշվի են առնվում ուսանողի հմտությունները, նրա ակտիվությունը ինքուրույն հանձնարարականների կատարման ընթացքում: Դասալսումների ընթացքում որոշ մոդուլներում լաբորատոր փորձի «իմիտացիա»-ները դիտարկելուց հետո, փորձագիտական խումբը գտնում է, որ հնարավոր է սահմանափակ ծախսերի և ռեսուրսների կիրառմամբ փորձերն իրականացնել ամբողջությամբ: Քոլեջում առկա որոշ սարքավորումները և լաբորատոր պարագաները (մանրադիտակներ, կշեռքներ, կոլբաներ, բաժանիչ ձագարներ և այլն) կարող են առավել մեծ հաճախականությամբ կիրառվել լաբորատոր որոշ փորձերի իրականացման համար, որոնք նույնպես կնպաստեն ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ղեկավար կազմի պատրաստակամությունը լաբորատոր միջավայրի բարելավման համար, սակայն քոլեջի սեփական ռեսուրսների առավել հագեցվածությունը կնպաստեր լաբորատոր նոր խնդիրների, մեթոդների ներդրմանը, հետազոտական աշխատանքների/խնդիրների իրականացմանը բոլոր կրթական ծրագրերում:

Դրական հանգամանք է, որ ուսանողները հետազոտություն են իրականացնում նաև պրակտիկաների ընթացքում՝ օգտագործելով քոլեջի գործընկեր հաստատությունների ռեսուրսները, սակայն գործընթացի առավել հստակ պլանավորումը և արդյունավետ վերահսկողությունը կարող են նպաստել քոլեջի բոլոր ուսանողներին այս աշխատանքներում ներգրավելուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՀԲՔ-ն խրախուսում է հետազոտությունների իրականացումը, առկա են հետազոտական գործունեության իրականացման և ուսումնառության հետ փոխկապակցման մեխանիզմներ՝ ուսանողներին տրվող համապատասխան առաջադրանքների միջոցով, քոլեջի դասախոսական համակազմն ակտիվորեն մասնակցում է ձեռնարկների, դասագրքերի մշակմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

ԵՀԲՔ-ը ռեսուրսային ապահովումը համարում է զարգացման ռազմավարական գործառույթ, որի խնդիրներն են նյութատեխնիկական բազայի կատարելագործումը, զարգացման ֆինանսատնտեսական կայունության ապահովումը, քոլեջի դասախոսական կազմի ներուժի զարգացումը ժամանակակից պահանջներին համապատասխան:

Ինքնավերլուծության համաձայն՝ 2018-2023 թթ. համար քոլեջը որդեգրել է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ժամանակակից ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություն՝ ըստ առաջնահերթությունների և հնարավորությունների պարբերաբար բարելավելով իր ռեսուրսները:

ԵՀԲՔ-ն ունի ուսումնական հաստատության շենք՝ Երևանում՝ 4129,5 քմ տարածքով, որտեղ կա 22 լսարան, 50 առարկայական կաբինետ-լաբորատորիա, 2 մասնագիտական կաբինետ, 2 արհեստանոց և 4 համակարգչային կաբինետ, մարզադահլիճ, մարզահրապարակ, գրադարան, ընթերցասրահ, գրապահոց, արխիվ, հանդիսությունների դահլիճ:

Փորձագիտական այցի ընթացքում կատարված դասալսումների ժամանակ արձանագրվեց, որ դասավանդման գործընթացում լայնորեն կիրառվում են թեմատիկ պլակատներ, օգտագործվում են մուլյաժներ, լաբորատոր դասասենյակներում առկա է գործնական հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ հագեցվածություն: Համապատասխան պայմանագրերի հիման վրա ուսանողների պրակտիկան, երբեմն նաև գործնական պարապմունքները տեղի են ունենում Երևանի և մարզերի տարբեր կլինիկաներում, պոլիկլինիկաներում, ծննդատներում, գիտահետազոտական կենտրոններում, որոնց ժամանակ օգտագործում են գործատուների ռեսուրսները:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի գրադարանն իր աշխատանքները իրականացնում է Քոլեջի Խորհրդի որոշմամբ հաստատված «ԵՀԲՔ-ի գրադարանի կանոնակարգ»-ի համաձայն: Գրադարանում առկա են 65703 անուն գրքեր, որից գեղարվեստական գրականությունը կազմում է 11538 անուն գիրք, ուսումնական ծրագրերին համապատասխան դասագրքերը՝ 41881 անուն գիրք, ինչպես նաև առկա են 5214 անուն ուսումնամեթոդական ձեռնարկներ և 7070 անուն ուսումնաօժանդակ գրականություն: 73 անուն ձեռնարկներ, բրոշյուրներ և դասագրքեր քոլեջի ամբիոնների կողմից հայերենով մշակվել և հրատարակվել են: Գրադարանում գրքերի թարմացում է իրականացվել 2022թ. մարտ ամսին, որի արդյունքում գրադարանը համալրվել է 172 անուն գեղարվեստական և 38 անուն ուսումնաօժանդակ գրականությամբ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ԵՀԲՔ-ը նախատեսում է թվայնացնել առկա գրադարանային ֆոնդը, սակայն ներկայումս դրա իրականացման համար պայմաններ ստեղծված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կատարվել են ռեսուրսների բարելավմանն ուղղված աշխատանքներ. ձեռք են բերվել լրացուցիչ թվով 26 համակարգիչներ՝ ուսանողների և աշխատակիցների համար: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ «Ատամնատեխնիկական գործ» բաժնում կահավորվել և շահագործման է հանձնվել սիմուլյացիոն կաբինետը:

Քոլեջի ամբողջ տարածքն ապահովված է հեռախոսային և ինտերնետային կապով, գործում է հասանելի Wifi ինտերնետային ծածկույթ:

ԵՀԲՔ-ում յուրաքանչյուր տարվա համար կազմվող ֆինանսների տնօրինման նախահաշվում, ելնելով նախորդ տարվա ընթացքում կատարված ծախսերից, բյուջետային և արտաբյուջետային մուտքերից, կատարվում է ֆինանսական միջոցների բաշխում: Ինքնավերլուծության համաձայն՝ վերջին տարիներին ավելացել են ֆինանսական ծախսերը, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ, պարտադիր սոցիալական վճարների, ձեռք բերվող ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի

արդիականացմանն ուղղված, ուսումնական միջավայրի բարելավման հետ կապված ծախսերի ավելացմամբ։

Քոլեջում ուսումնական ծախսերի չափաբաժինը (դասախոսական անձնակազմի աշխատավարձեր, ուսումնական ձեռնարկների և գրքերի, գույքի ձեռքբերման, ուսումնական կաբինետների կահավորման և վերանորոգման և ուսանողների հետ անմիջապես առընչվող այլ նպատակներով կատարված ծախսեր) ծախսերի ընդհանուր ծավալում (վերջին չորս տարվա կտրվածքով) կազմել է միջինում 90%։

ԵՀԲՔ-ում ֆինանսական գործունեությունը իրականացվում է քոլեջի կանոնադրության, Ֆինանսների տնօրինման քաղաքականության, Ռեսուրսների բաշխման ընթացակարգի, ՀՀ աշխատանքային և հարկային օրենսգրքերի և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումները, կիսամյակի կտրվածքով տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսների՝ գույքի, տեխնիկական միջոցների և ուսումնամեթոդական նյութերի վերաբերյալ իրենց առաջարկները։ Այնուհետև այս ցանկը ներկայացվում է տնօրենին։ Քոլեջի հնրաավորությունները և ռեսուրսների ձեռքբերման հրատապությունը հաշվի առնելով՝ տրամադրվում են համապատասխան ֆինանսական ռեսուրսները։

ԵՀԲՔ-ը մինչ 2018թ. հանդիսացել է ՊՈԱԿ, այնուհետև 16.01.2018թ.-ից փոխվել է իրավակազմակերպական ձևը, և քոլեջը դարձել է 100% պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերություն։ Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի շահաբաժինների հաշվարկման բազան որոշելիս զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո 50% շահութաբաժնի տոկոսադրույքով ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե։ 2021 թվականի դրությամբ քոլեջի տարեկան ֆինանսական ռեսուրսները բաշխվել են հետևյալ տոկոսային հարաբերությամբ՝ աշխատավարձ 51.7%, հարկային պարտավորություններ 16.5%, ուսումնական և տնտեսական ծախսեր 27.3%, գովազդ 1%, չնախատեսված ծախսեր 3%, շահույթ 0.5%։ Ֆինանսական ռեսուրսների հաշվառումն իրականացնում է Քոլեջի հաշվապահությունը և եռամսյակային կտրվածքով քոլեջի տնօրենին հաշվետվություն է ներկայացնում ստացված մուտքերի և ելքերի վերաբերյալ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրավակազմակերպական ձևի փոփոխությունը չի հանգեցրել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմանը կամ աղբյուրների բազմազանեցմանը։

Քոլեջի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջև փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է Mulberry համակարգի միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ներքին փաստաթղթաշրջանառության համար օգտագործվում են աշխատակիցների անձնական էլհասցեները։ Ներքին ցանցը ներդրվել է, սակայն դեռևս չի կիրառվում բոլոր ստորաբաժանումների միջև հաղորդակցության ապահովման համար։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնայնացումը դեռևս քոլեջի համար մարտահրավեր է։ Հաշվապահական հաշվառումն իրականացվում է ՀԾ-Հաշվապահ-7 ծրագրի միջոցով։

ԵՀԲՔ-ում ներքին կարգապահական կանոնների պահպանման համար սահմանված են հերթապահություններ՝ բաժինների վարիչների և լաբորանտների կողմից։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին կարգապահական կանոնների պահպանման նպատակով հերթապահություն է սահմանված նաև ՈւԽ-ի կողմից:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ԵՀԲՔ-ում առկա են տարհանման պլաններ, որոնք փակցված են շահակիցների համար տեսանելի վայրերում: Քոլեջում առկա է նաև հակահրդեհային համակարգ:

ԵՀԲՔ-ում ներառական կրթության զարգացման և սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց լիարժեք ներգրավման հարցերը դեռևս թերի են, առկա է ենթակառուցվածքների համապատասխանեցման խնդիր, քանի որ շենքը չունի վերելակ, մուտքերը հարմարեցված չեն շարժասայլակների համար: Քոլեջի ստորաբաժանումների ուսումնասիրությունից պարզվեց, որ քոլեջը չունի նաև սննդի կետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ գործում է անվտանգության ծառայությունը և բուժկետը: Անվտանգության կանոնները գործում են նաև որոշ լաբորատորիաներում, քոլեջը մասամբ է ուշադրություն դարձնում լաբորատորիաներում անվտանգության կանոնների ապահովմանը համապատասխան փորձերի կատարման և նյութերի կիրառման համար[5]:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը, կարևորելով առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված հարցերը, պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ նվիրված առողջ ապրելակերպին, վնասակար գործոնների ազդեցությանը մարդու առողջության վրա, որոնց ժամանակ լուսաբանվում են ալկոհոլամոլության, ծխախոտամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի օգտագործման հետ կապված հարցեր:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների վերաբերյալ գնահատման համար ԵՀԲՔ-ում կիրառվում են ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումները, քննարկումները և հանդիպումները:

2021 թվականից քոլեջն ունի որակի ապահովման պատասխանատու, ում կողմից իրականացվում են հարցումներ ուսանողների, շրջանավարտների և դասավանդողների շրջանում: Հարցաթերթիկներում ներառված են հարցեր կաբինետների, լաբորատորիաների պայմանների և հագեցվածության, գրադարանի, բուժկետի, անվտանգության ծառայության գործունեության և մարզադահլիճի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները քննարկվում են տնօրինական խորհրդի նիստերում և իրականացվում են բարելավման ուղղված որոշ քայլեր, այդուհանդերձ համակարգը դեռևս նոր է ներդրվում, և համապարփակ գնահատումներ ու դրանց վրա հիմնված բարելավումներ դեռևս առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսումնական միջավայրի շարունակական բարելավմանը միտված քոլեջի միտումները: Համապատասխան մուլյաժներով, կաբինետներով, լաբորատորիաներով և դասավանդման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներով հագեցվածությունը հիմնականում հնարավորություն է տալիս քոլեջին հասնելու կրթական ծրագրերով նախանշված

[5] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

նպատակներին։ Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջի սեփական ռեսուրսներից բացի պայմանագրերի շրջանակում՝ մասնավորապես ուսումնական պրակտիկայի անցկացման գործընթացում, բավական լայն հնարավորություններ են ստեղծվում գործընկեր կազմակերպությունների (կլինիկաներ, դեղատներ, ատամնաբուժարաններ և այլն) ռեսուրսների կիրառման համար, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը շարունակաբար ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում նոր սարքավորումների, ուսումնական գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար, սակայն հաշվի առնելով, այն հանգամանքը, որ ընթացիկ ծախսերը կազմում են 90 %-ը, որոնցից հատկացվում են միջոցներ աշխատավարձերի, ձեռնարկների տպագրման և ուսումնական այլ ծախսերի համար, քիչ միջոցներ են մնում քոլեջի զարգացմանը տրամադրելու համար։ Այս առումով փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ով և առաքելությամբ սահմանված նշանակետերը և միջին մասնագիտական կրթության նկատմամբ ժամանակակից պահանջներն ու մարտահրավերները հաղթահարել քոլեջը կկարողանա ֆինանսական այլընտրանքային աղբյուրների ներգրավմամբ։ Ֆինանսների տնօրինման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը որոշակի միջոցներ է հատկացնում նաև գովազդի նպատակով, ինչը նպաստում է քոլեջի մասին տեղեկատվության հասանելիությանը և վարկանիշի բարձրացմանը։

Դինամիկ զարգացման տեսանկյունից քոլեջում որոշակիորեն սկսել են կարևորվել համակարգիչների, պրոյեկտորների, ներքին ցանցի առկայության անհրաժեշտությունը։ Այդ ուղղությամբ առկա է որոշակի առաջընթաց, սակայն ուսումնառության գործընթացում էլեկտրոնային ուսուցման հարթակների կիրառման կամ կառավարման գործընթացում թվային տեխնոլոգիաների ներդրման մասով դեռևս գործողությունները տեսանելի չեն։ Էլեկտրոնային հարթակների կիրառումը, ինչպես նաև փաստաթղթավորման էլեկտրոնայնացումը կնպաստեն քոլեջում ընթացող գործընթացների առավել համակարգմանը, փաստաթղթավորման մեկտեղմանը և շահակիցների համար հասանելիության դյուրացմանը։

Փորձագիտական խմբի կողմից դրական են գնահատվում քոլեջի իրականացրած գործընթացները՝ ուղղված ուսանողների առողջության պահպանմանն ու անվտանգ միջավայրի ձևավորմանը։ Սակայն կարևորվում է նաև տեղաշարժման սահմանափակ հնարավորություններով և հատուկ կարիք ունեցող ուսանողների համար պայմանների ստեղծումը ներառական ու բոլորի համար հասանելի կրթության տրամադրման տեսանկյունից։ Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ծրագրերի առանձնահատկություններից ելնելով՝ լաբորատորիաներից օգտվելու կանոնների հստակ սահմանումը կնպաստի ուսանողների կողմից իրականացվող աշխատանքների առավել անվտանգ իրականացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կիրառվում են ռեսուրսներից բավարարվածության որոշ գործիքներ, այդուհանդերձ դրանց համակարգային կիրառումը և շահակիցների շրջանում նախաձեռնողականության դրսևորումը հնարավարություն կստեղծեն բացահատելու ռեսուրսային հագեցվածության խնդիրները և հիմք կհանդիսանան հետագա համալրման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր գործունեության ընթացքում ձևավորել և ադապտացրել է իր ենթակառուցվածքները, ունի ֆինանսական և գործառնական կառավարման ինստիտուցիոնալ հենք, կրթական ծրագրերի իրականացման և կայունության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ, շարունակաբար ջանքեր է գործադրում դրանք համալրելու, թարմացնելու ուղղությամբ, ստեղծել է ուսանողների կարիքներին համապատասխան կրթական միջավայր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԵՀԲՔ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո բաժինների և ամբիոնների վարիչները, պրակտիկայի վարիչը, մեթոդիստը, որակի պատասխանատուն, գրադարանավարները տնօրենին ներկայացնում են հաշվետվություններ ուսանողական համակազմի, ընթացիկ և կիսամյակային առաջադիմության, միջանկյալ քննությունների և ավարտական արդյունքների, ուսանողների հարգելի և անհարգելի բացակայությունների, կատարված միջոցառումների, հետազոտական աշխատանքների վերաբերյալ:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթը համարվում է տնօրենի տարեկան հաշվետվությունը, որը կազմվում է քոլեջի բոլոր ստորաբաժանումների ընթացիկ և տարեկան հաշվետվությունների հիման վրա: Ըստ ինքնավերլուծության բոլոր հաշվետվությունները քննարկվում են տնօրինական խորհրդի նիստերում: Տնօրենի տարեկան հաշվետվությունը քննարկվում և վերլուծվում է քոլեջի խորհրդի նիստում, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մինչև խորհուրդ հասնելը հաշվետվությունը քննարկվում է նաև մյուս ստորաբաժանումների հետ՝ հնարավորություն տալով լուծել ընթացիկ խնդիրները: Փորձագիտական դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ԵՀԲՔ-ում կա վերից վար և վարից վեր հաշվետվողականություն, ինչպես նաև բոլոր օղակներում ներդրված են հաշվետվողականության մեխանիզմներ: Հաշվետվություններում ներկայացվում են պլանավորման համաձայն իրականացված գործընթացները, դրանց արդյունքները, չկատարման պատճառները:

Տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում նաև ԿԳՄՍ նախարարությանը և այլ պետական գերատեսչություններին:

ԵՀԲՔ-ն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակներ՝ նորաստեղծ պաշտոնական կայքէջ և ֆեյսբուքյան էջ: Տեղեկատվության տարածման համար առավել ակտիվորեն կիրառվում է Ֆեյսբուք

սոցիալական ցանցը, որտեղ առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն ընդունելության պայմանների, մասնագիտությունների, ընդունելության քննության, վարձավճարների և այլնի վերաբերյալ: Հասարակայնության հետ կապերի ապահովումն իրականացվում է քոլեջի մասին տեղեկատվության տարածմամբ «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնում և «Հայաստանի քոլեջները և արհեստագործական ուսումնարանները» տեղեկատու ձեռնարկում: Հարկ է նշել, որ քոլեջի մասին հիմնականում հասանելի տեղեկատվությունը հայալեզու է:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի աշխատանքային գործունեության թափանցիկության ապահովման կարևոր միջոց է՝ կարիերայի պատասխանատուի էջը Ֆեյսբուք սոցիալական հարթակում, որում տեղադրվում է տեղեկատվություն քոլեջում իրականացվող միջոցառումների, ցուցահանդեսների, վերապատրաստումների, լրացուցիչ դասընթացների, խորհրդատվությունների, բաց դասերի, ուսանողների ձեռքբերումների, ազատ աշխատատեղերի, գործատուների հետ հանդիպումների, քննարկումների վերաբերյալ: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը, կազմակերպվող բազմաթիվ ուսուցողական և դաստիարակչական բնույթի միջոցառումները լուսաբանվում և տարածվում են նաև յութուբյան էջի, «Դպրություն կրթական հաղորդաշար»-ի միջոցով: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ քոլեջն իր մասին տեղեկատվությունը հասանելի է դարձնում նաև տարաբնույթ էքսպոների մասնակցության և դպրոցներ այցելությունների միջոցով:

Ինքնավերլուծության համաձայն՝ հասարակության հետ կապի ձևավորմանը նպաստում է տնօրենի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ հաղորդակցման կանոնակարգված գործընթացը: Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներից են սոցիալական ցանցերը, ինչպես նաև քոլեջի էլեկտրոնային հասցեն՝ henaketayin@gmail.com: Քոլեջը որպես հասարակության հետ կապերի մեխանիզմ է դիտարկում փորձագիտական այցի օրերին իր գործունեությունը մեկնարկած պաշտոնական կայքը:

ԵՀԲՔ-ը գործատուների և շրջանավարտների հետ կազմակերպում է բաց քննարկումներ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նրանք մասնակցություն են ունենում ամբիոնների և խորհուրդների նիստերին՝ հնարավորություն ունենալով իրենց առաջարկները ներկայացնել համագործակցության հաստատման, պրակտիկաների իրականացման և այլնի վերաբերյալ: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը համագործակցության ապահովման նպատակով հաճախակի կազմակերպում է հանդիպումներ պրակտիկայի բաժնի վարիչի, կարիերայի ուղղորդման ու որակի ապահովման պատասխանատուների, մեթոդիստների և գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԵՀԲՔ-ն ունի նաև արձագանքների գիրք, որտեղ ներկայացված են ուսանողների, ծնողների, գործատուների, դպրոցի տնօրենների և ուսուցիչների կողմից ստացված բազմաթիվ արձագանքներ: Այդուհանդերձ, չնայած կիրառվող մեխանիզմների բազմազանությանը՝ քոլեջը դեռ չի իրականացրել իր ունեցած գործիքակազմի արդյունավետության վերլուծություններ:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման նպատակով քոլեջի կողմից իրականացվում են տարբեր մասնագիտությունների գծով լրացուցիչ դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ: Ինքնավերլուծության համաձայն՝ «Քոլեջ-համալսարան» ծրագրի շրջանակներում իրականացվել են ԵՀԲՔ-ի և Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանողների մասնակցությամբ դասախոսություն-քննարկումներ, ԵՀԲՔ-ի և Երևանի պետական համալսարանի ուսանողների մասնակցությամբ դեռահասների մոտ ագրեսիվության ախտորոշման, բնավորության շեշտվածության բացահայտման վերաբերյալ անցկացված հետազոտական աշխատանքները, քոլեջի ուսանողների և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի աշխատողների մասնակցությամբ պարբերաբար տեղի ունեցող զրույց-զեկույցները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022 թվականին «Դեպի Հայք» հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում քոլեջը համագործակցել է «Birthing Armenia» ծրագրի մասնակից Անգլիայից ժամանած մասնագետի հետ, ով քոլեջում ֆիզիոթերապիայի դասընթացներ է վարել ուսանողների համար: Երևանի քաղաքապետարանի և World Vision Հայաստան-ի հետ համագործակցության հուշագրի շրջանակներում քոլեջը 2019թ. իրականացրել է Երևանի նախադպրոցական հաստատությունների բուժքույրերի «Առաջին բժշկական օգնություն» թեմայով դասընթացներ, որի համար ստացել է շնորհակալագիր:

Քոլեջը դիմորդների համար ընդունելության քննություններից առաջ անվճար խորհրդատվություններ է անցկացնում «Կենսաբանություն» առարկայից:

Քոլեջի կողմից մշակված և տպագրված բոլոր ուսումնամեթոդական ձեռնարկները և դասագրքերը՝ հայերեն լեզվով, նախատեսված միջին մասնագիտական կրթությամբ բուժաշխատողների համար տրամադրվում են հանրապետության մյուս միջին մասնագիտական պետական բժշկական ուսումնական հաստատություններին, նաև Գիտաբժշկական և Ազգային գրադարաններին: Քոլեջի ուսանողական խորհուրդը ևս պարբերաբար մասնագիտական-ուսուցողական բնույթի աշխատանքներ է իրականացնում հասարակության տարբեր խմբերի համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի գործունեության բազմամյա փորձի ընթացքում ձևավորվել և ներկայումս գործում են ինչպես ներքին (ստորաբաժանումներից դեպի տնօրինություն), այնպես էլ արտաքին (քոլեջի տնօրինությունից դեպի համապատասխան պետական գերատեսչական մարմիններ) հաշվետվողականության մեխանիզմներ և դրանց կիրառման հստակ ընթացակարգեր, ինչը նպաստում է թափանցիկությանն ու հաշվետվողականության ապահովմանը քոլեջի հիմնական շահակիցների համար: Քոլեջի պատասխանատուները առկա հնարավորությունների սահմաններում փորձում են ներքին գործընթացների, կատարողականների, առաջընթացի և պլանավորման մասին հնարավորինս թափանցիկ իրազեկել ինչպես արտաքին և ներքին շահակիցներին, այնպես էլ հասարակության ավելի լայն շրջանակների: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս գործընթացների արդյունավետության բարձրացմանը կարող է մեծապես նպաստել քոլեջի պաշտոնական կայքի լիարժեք գործարկումը՝ ապահովելով քոլեջի կրթական ծրագրերի,

շրջանավարտների, արտաքին կապերի և մյուս գործընթացների մասին առավել ընդլայնված տեղեկատվություն ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով, քանի որ քոլեջն իրեն դիրքավորում է որպես տարածաշրջանում գործունություն ծավալող մասնագիտական ուսումնական հաստատություն:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի միտումները հասարարակության, մասնագիտական այլ ուսումնական հաստատությունների ու կառույցների հետ հետադարձ կապերի ամրապնդման, շարունակական զարգացման առումով, սակայն գտնում է, որ կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումը կհանգեցնի նշված աշխատանքների առավել թիրախավորված ու համակարգային իրականացմանը: Վերոնշյալ գործընթացների արդյունավետության բարձրացմանը կարող է օգնել նաև ժամանակակից կապի ու հաղորդակցման տեխնոլոգիական հնարավորությունների ու նոր լուծումների կիրառումը:

Փորձագիտական խումբը մեծապես կարևորում է, որ քոլեջն ունի գիտելիքների փոխանցման ավանդաբար ձևավորված երկարամյա փորձառություն և համապատասխան գործընթացներ իր փորձը այլ համանման կրթական հաստատությունների հետ կիսելու, նրանց գրականությամբ ու այլ ռեսուրսներով աջակցելու և լայն համագործակցություններ ծավալելու հարցում, ինչը նպաստում է քոլեջի դերի առաձնահատուկ շեշտադրմանը բժշկական ուսումնական հաստատությունների շարքում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում կանոնակարգված են ներքին և արտաքին հաշվետվողականության գործընթացները, հաստատությունն ապահովում է իր գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու թափանցիկությունը, ինչպես նաև իր փորձառությամբ կիսվելու և իր կուտակած գիտելիքներն ու արժեքները հանրային լայն շրջանակներին հասանելի դարձնելու պատրաստակամությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԵՀԲՔ-ն իր Ռազմավարական ծրագրում որպես զարգացման նպատակ սահմանել է միջին մասնագիտական բժշկական կրթական համակարգի տարածաշրջանային կենտրոն դառնալը, իսկ որպես խնդիր սահմանել է ինտեգրումը կրթության բնագավառի միջազգային զարգացումներին՝ համեմատելիությունն ու համադրելիությունը միջազգային ընդունված ընթացակարգերին և պահանջներին ապահովելու համար: Այդուհանդերձ, քոլեջի տարածաշրջանային դերն ու նշանակությունն առավելապես սահմանափակվում են

Հայաստանի Հանրապետությունում հաստատության գործունեությամբ[6]: Քոլեջը նպատակ ունի ընդլայնել և զարգացնել սոցիալական գործընկերությունը՝ ապահովելով քոլեջի և գործատուների, միջազգային կազմակերպությունների, այդ թվում նաև արտասահմանյան համապատասխան ուսումնական հաստատությունների միջև երկարատև հարաբերությունների զարգացումը: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող հստակ ձևակերպած քաղաքականություն քոլեջը չունի, և այդ նպատակին տանող ընթացակարգեր քոլեջում դեռևս չեն գործում:

Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրություններն ու վերլուծությունը ցույց տվեցին, որ իր գործունեության ընթացքում քոլեջը մեծ ուշադրություն է հատկացրել տեղական կազմակերպությունների հետ լայն համագործակցային ցանց ստեղծելուն (բուժհաստատություններ, դեղատներ, ատամնաբուժական և կոսմետոլոգիական կենտրոններ, բուհեր, քոլեջներ, հասարակական կազմակերպություններ և այլն): Ինքնավերլուծության համաձայն՝ արտաքին կապերին նպաստող միջավայր ստեղծելու նպատակով 2021-2022 ուսումնական տարում քոլեջը համագործակցել է 70 պետական և մասնավոր կազմակերպությունների հետ: Այսպիսի համագործակցությունները բազմաթիվ են, դրանցից որոշները դրվագային են (էպիզոդիկ մեկանգամյա ծրագրեր), բայց կան նաև ինստիտուցիոնալ համագործակցություններ, որոնց լավագույն օրինակներից թերևս կարելի է համարել քոլեջի սովորողների համար արդյունավետ պրակտիկա կազմակերպելու նպատակով առկա պայմանագրերը, այս նպատակով քոլեջում համապատասխան բաժնի, պատասխանատուի, մշակված ընթացակարգերի և այսպիսով կայացած ենթակառուցվածքի առկայությունը:

Ըստ ինքնավերլուծության՝ արտաքին կապերի ապահովման, արտաքին շահակիցների հետ համագործակցելու որոշ գործառույթներ սահմանված են տարբեր ստորաբաժանումների պաշտոնեական հրահանգներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում արտաքին և միաջազգային կապերի համակարգումը իրականացվում է որակի պատասխանատուի կողմից: Արտաքին կապերի հաստատումն ու զարգացումն իրականացվում է նաև քոլեջի ղեկավար կազմի, պրակտիկայի ղեկավարի և այլ վարչական աշխատակիցների կողմից՝ համաձայն իրենց գործունեության ոլորտի: Միջազգային ծրագրերի մասնակցության հստակ պլան քոլեջը դեռևս չունի:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում տարբեր մասնագիտությունների գծով սովորում են նաև օտարերկրյա ուսանողներ՝ Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանի Հանրապետությունից, Սիրիայից, ԱՄՆ-ից, Իրանից, Ուկրաինայից: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ դրանք նշված պետությունների քաղաքացի հանդիսացող հայազգի սովորողներ են, և նրանց կրթությունը քոլեջում կազմակերպվում է մնացած տեղացի սովորողների հետ միասին՝ հայերենով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է տարբեր դեղատնային ցանցերի հետ: FARM training center-ի հետ համագործակցության արդյունքում քոլեջի ուսանողները մասնակցում են տարբեր դասընթացների: ԿԳՄՍ նախարարության և FARM training center-ի կողմից կազմակերպված օլիմպիադային քոլեջը

[6] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ևս մասնակցություն է ունեցել և հաղթանակի շնորհիվ քոլեջի ուսանողներին առաջարկել են մասնակցել մեկամսյա անվճար դասընթացի:

Ինչպես արդեն նշվեց, ՌԾ զարգացման նպատակների համաձայն՝ քոլեջը հավակնում է դառնալ միջին մասնագիտական բժշկական կրթական համակարգի տարածաշրջանային կենտրոն: Այս ուղղությամբ փորձագիտական խմբի ուսումնասիրություններն ու վերլուծությունը ցուց տվեցին, որ չնայած որոշ մասնավոր օրինակների առկայության (մասնակցություն միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների նախաձեռնած որոշ ծրագրերին, արտասահմանցի դասախոսների եզակի այցելություններ, քոլեջում դասավանդողների մասնակցություններ միջազգային սեմինարների և այլն), քոլեջն իր փաստացի գործունեությամբ և ենթակառուցվածքով բավական հետ է մնում միջազգայնացման հարցում իր իսկ սահմանած նշաձողից: Այցից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա օրինակներում նախաձեռնողականությունը հիմնականում ոչ թե քոլեջինն է եղել, այլ համագործակցող կազմակերպությանը կամ միջազգային սեմինարի մասնակցությունը դասախոսն իրականացրել է սեփական նախաձեռնությամբ և միջոցներով: Որոշ նախագծեր՝ դարձյալ համագործակցող կողմի նախաձեռնությամբ նախքան Covid-19 համավարակը մեկնարկած, դադարել են դրա պատճառով, այս պահին չեն շարունակվում, քանի որ համագործակցող կողմից «նոր քայլ» դեռևս առկա չէ: Հատկանշական է նաև, որ Erasmus+ հայաստանյան գրասենյակից ամիսներ առաջ արված համագործակցության առաջարկի ուղղությամբ քոլեջը ևս դեռևս նախաձեռնողականություն չի ցուցաբերել:

Ինքավերլուծության համաձայն՝ ԵՀԲՔ-ը, համագործակցելով «Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ»-ի հետ և հիմնվելով «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» «Երեխաների մոտ սուր դիարեային հիվանդությունների վարման կոնոններ»-ի և «Երեխաների մոտ սուր շնչառական հիվանդությունների վարման կանոններ»-ի տեղայնացված տարբերակների վրա, կազմել է համանուն ուսումնական ձեռնարկներ բժշկական քոլեջների սովորողների և դասավանդողների համար: Քոլեջի դասախոսական կազմը, համագործակցելով «Արաբկիր» բժշկական կենտրոնի «Դեռահասների առողջության պահպանման կենտրոն»-ի, «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի հետ, դպրոցի բուժքույրերի շրջանում իրականացրել է վերապատրաստումներ Երևանում և մարզերում: Վերոնշյալ գործընթացները վկայում են քոլեջի ունեցած կարևորագույն հասարակական պատասխանատվության մասին:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին տարիների ընթացքում նկատվել է մեծ հետաքրքրություն օտար լեզվի ուսուցման ուղղությամբ, ուսանողների շրջանում զգացվում է օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացում: Համաձայն ինքնավերլուծության՝ ռուսաց լեզվի իմացությունը թե դասախոսական և վարչական անձնակազմի և թե ուսանողների մոտ գրեթե 100% է, իսկ այլ օտար լեզուների (հիմնականում անգլերենի) իմացությունը՝ 50%-ից բարձր: Այսքանով հանդերձ, քոլեջի կողմից լեզվաիմացությունը նշվում է որպես սահմանափակող գործոն միջազգային ծրագրերին մասնակցության, օտարալեզու գրականությունից օգտվելու, կրթական ծրագրերի բենչմարքինգ իրականացնելու, դասախոսական կազմի՝ օտարալեզու վերապատրաստումների մասնակցելու տեսանկյունից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում անգլերենի ցածր մակարդակ ունեցող ուսանողների հետ դասախոսներն անհատական աշխատանքներ են իրականացնում: Քոլեջի զարգացման ծրագրի գործողությունների պլանով նախատեսվում է առաջիկայում կազմակերպել «Օտար լեզու» և «Համակարգչային օպերատորական գործ» առարկաների լրացուցիչ դասընթացներ և վերապատրաստումներ: Քոլեջն օտարալեզու կրթական ծրագրեր դեռևս չի նախատեսում իրականացնել[7]: Անգլերենի դասախոսներից մեկը վարչական և ՊԴ կազմի ցանկացող մասնագետների համար կազմակերպել է վերապատրաստում, սակայն սա դեռևս պարբերական բնույթ չի կրում: Այդուհանդերձ, խնդրի առկայությունը, նրա ունեցած դերը և այս առումով բարելավման ուղիները լիարժեք վերլուծված չեն, չի ուրվագծվում հստակ պլանավորումը վերոնշյալ խնդիրների հաղթահարման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի դերը և շարունակաբար քայլեր է իրականացնում այդ կապերի հաստատման, դրանք ի նպաստ քոլեջի ռազմավարական նպատակների իրականացման օգտագործելու ուղղությամբ: Կարևոր հանգամանք է, որ այս գործընթացները մեծապես նպաստում են ուսանողների պրակտիկայի համար նոր հնարավորությունների ստեղծմանը, պրակտիկ ոլորտի հետ ամուր կապի պահպանմանը, դասավանդող համակազմի կայունությանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին կապերի և միջազգայանացման ուղղությամբ քոլեջի սահմանած նշաձողի (իր սահմանմամբ՝ կրթության բնագավառի միջազգային զարգացումներին ինտեգրումն ապահովելուն) հաղթահարմանն ուղղված պլանների բացակայությունը խոչընդոտում է քոլեջի կողմից միջազգայանցման քաղաքականության հստակեցմանը և չի նպաստում միջազգայնացման համար միջավայրի ստեղծմանը: Փորձագիտական խումբը հատկանշական է համարում հայաստանյան տարբեր կազմակերպությունների, ուսումնական և բժշկական ոլորտի հաստատությունների հետ հաստատած և ավանդաբար իրենց զարգացումն ունեցող կապերի առկայությունը, որը հանգեցնում է քոլեջի առանձնահատուկ նշանակությանը ՀՀ բժշկական ոլորտի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շարքում: Քոլեջի կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, խորհրդատվության և մասնագիտական գրականության տրամադրումը վկայում է նրա բարձր հասարակական, կրթական պատասխանատվության մասին:

Փորձագիտական խումբը կարևորում է միջազգայնացմանն ուղղված քայլերի իրականացումը, ինչը որոշակի հնարավորություններ է ստեղծել փորձի փոխանակման համար: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից այս ուղղությամբ նախաձեռնողականության պակասը, համապատասխան մարդկային ռեսուրսներ չտրամադրելը լրացուցիչ խոչընդոտներ են այս գործընթացներն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու տեսանկյունից: Կարևոր է նաև համագործակցությունների արդյունքների կիրառումը կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման, դասախոսական վերապատրաստումների ակտիվացման, ուսանողների և

[7] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

դասախոսների համար շարժունության հնարավորությունների ստեղծման, համատեղ ծրագրերի իրականացման համար։ Վերոնշյալ գործընթացներն իրենց բարերար ազդեցությունը կունենան կրթական ծրագրերի որակի վրա՝ քոլեջի շրջանավարտներին դարձնելով առավել մրցունակ ՀՀ և միջազգային շուկաներում։ Այս գործընթացները լրացուցիչ հնարավորություններ կստեղծեն նաև լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավման տեսանկյունից։ Դիտարկելով միջազգայնացման գործընթացների համար քոլեջի կողմից նշվող խոչընդոտներն ու սահմանափակող գործոնները՝ պատասխանատու հաստիքի բացակայություն, սահմանափակ ֆինանսական միջոցներ, անձնակազմի լեզուների տիրապետման ցածր մակարդակ և այլն, փորձագիտական խումբը համարժեք չի համարում քոլեջի կողմից լուծումների ուղղությամբ գործադրված ջանքերը՝ հատկապես հաշվի առնելով, որ ՌԾ-ի վերջնաժամկետին մնում է մեկ տարուց էլ պակաս ժամանակ և սահմանված նպատակն ու խնդիրներն, ըստ ամենայնի, կմնան անկատար։

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում քոլեջի կողմից դասախոսների և ուսանողների շրջանում անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված կայուն մեխանիզմների ներդնումը, ինչը հիմք կստեղծի շահակիցներին միջազգայնացման գործընթացներում ներգրավելուն։

Ինչպես նաև կարևոր է, որ քոլեջը գնահատի իր ներուժը միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետ իրականացման համար։

Փորձագիտական խումբը գտնում է, որ հաջորդ ռազմավարական ծրագրում այս ուղղությունների հստակեցումը, դրանց զարգացման նպատակով համապատասխան ռեսուրսների հատկացումը, գործողությունների և ակնկալվող արդյունքների խորքային պլանավորումը քոլեջի համար հեռանկարային նոր հնարավորություններ կստեղծեն։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՀԲՔ-ն իր ՌԾ-ում սահմանել է արտաքին կապերի և միջազգայնացման հարցերում հավակնոտ նշաձող և գնահատելով այս ուղղությամբ քոլեջում առկա վիճակն ու ընթացիկ աշխատանքային առաջնահերթությունները, մասնավորապես՝ միջազգայնացման ուղղությամբ պատասխանատու ենթակառուցվածքի, պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, ինչպես նաև անձնակազմի և սովորողների օտար լեզուների իմացության ներկայիս վիճակը, ԵՀԲՔ գործադրած ջանքերի բավարար չլինելը միջազգայնացման իր իսկ սահմանած մակարդակն ապահովելու համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջի 2018-2023 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում առանձնացված է որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը և հզորացումը: Ըստ ռազմավարական ծրագրի՝ որակի ապահովման համակարգից քոլեջի ակնկալիքը մասնագետների պատրաստման որակի մշտադիտարկման մեխանիզմների մշակումն ու իրագործումն է: Սահմանված նպատակի իրականացման համար նշված են հետևյալ խնդիրները՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների ստեղծումը, ինչպես նաև որակի ներքին ապահովման համակարգի և քոլեջի գործունեության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Որպես քոլեջի գործընթացների գնահատման մեխանիզմներ նախանշվում են ներքին նոր չափանիշների, կանոնակարգերի, ընթացակարգերի ստեղծումը, իսկ որակի ապահովման համակարգի միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղությամբ հստակ քայլեր նախանշված և իրականացված չեն, ինչպես նաև իրականացված չէ միջազգային չափանիշների ուսումնասիրում և վերլուծություն: Փորձագիտական խմբին տրամադրված փաստաթղթային հենքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս գործընթացների պլանավորման հիմքում դրված նպատակները երբեմն չափազանց ընդարձակ են, և ոչ միշտ են բխում որակի ապահովման համակարգի գործունեությունից: Այսպես օրինակ՝ ապահովել ԵՀԲՔ կառավարման համակարգի արդյունավետությունը և ֆինանսական կայունությունը՝ աջակցել հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը, նպաստել ուսանողական համակազմի ապահովմանը: Խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների և ակնկալվող արդյունքների միջև ևս առկա են խզումներ: Հաշվի առնելով, որ նախանշված գործընթացների կատարման համար հիմնականում նշված ժամկետները համընկնում են Ռազմավարական ծրագրի վերջնաժամկետներին և դիտարկելով փաստացի իրականացված գործընթացները՝ կարելի է փաստել, որ նախատեսված փաստաթղթային հենքը ձևավորվել է, սակայն պլանավորմամբ նախատեսված համապարփակ վերլուծությունները դեռևս ամբողջովին չեն իրականացվել:

2020 թվականից քոլեջում առկա է կրթության որակի ապահովման պատասխանատուի հաստիք, որին վերապահված է քոլեջի որակի ապահովման գործընթացների իրականացումը, իսկ որակի ապահովման գործընթացներն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվել են կրթության որակի ապահովման մասնագիտական հանձնաժողովներ: Որակի ապահովման պատասխանատուի համար հատկացված է աշխատասենյակ, որտեղ իրականացվում են նաև ընթացիկ քննարկումները: Քոլեջը ՈԱ համակարգի զարգացման համար հատկացնում է ֆինանսական միջոցներ միայն հաստիքով նախատեսված աշխատավարձի ձևով: Կրթության որակի պատասխանատուի համար մշակված է պաշտոնի նկարագիր, համաձայն որի՝ որակի պատասխանատուի գործառույթների շրջանակում է տրամադրվող

կրթության որակի շարունակական բարելավման համար անհրաժեշտ նախադրյալների և խթանող մեխանիզմների ձևավորումը, դասավանդման և ուսումնառության որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգումը և իրականացումը, շահակիցների կարիքները բավարարող կրթական ծրագրերի որակի ապահովումը, կրթական որակի մշակույթի զարգացումը, որակի վերաբերյալ հաշվետողականության ապահովումը ներքին և արտաքին շահակիցների առջև: Որակի պատասխանատուի նախաձեռնությամբ մշակվել են մի շարք փաստաթղթեր՝ «Որակի ապահովման քաղաքականություն», «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգ», «Ուսանողների կողմից դասախոսական կազմի և ամբիոնների պարբերական գնահատման գործընթացի ընթացակարգ», «Կրթության որակի գնահատման և ապահովման մասնագիտական հանձնաժողովի կանոնակարգ» և այլն: Փաստաթղթերը հիմնականում հաստատվել են 2021 թվականին: Ըստ Որակի ապահովման քաղաքականության՝ քոլեջի ՈԱ համակարգը միտված է որակի շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը, իսկ որպես որակի շարունակական բարելավման գործիք դիտարկվում են ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացավող հարցումները: Փաստաթղթում սահմանված են նաև որակի ապահովման 4 հիմնարար սկզբունքներ՝ համակարգային մոտեցում, կենտրոնացված կանոնակարգում, ինքնագնահատում, բարելավում: Սակայն այն չի արտացոլում տարբեր օղակների դերակատարումը որակի ապահովման համակարգի զարգացման տեսակետից, առկա չեն միասնական գնահատման և ինքնագնահատման մեխանիզմները և չափանիշները տարբեր օղակներում:

Որակի ներքին ապահովման համակարգում ներքին շահակիցների ընդգրկվածությունը արտահայտվում է անցկացվող հարցումների, հանդիպումների, քննարկումների ձևով: Ներքին շահակիցները ընդգրված են որակի ապահովման հանձնաժողովներում, որի համար կա ևս մշակված կանոնակարգ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովների աշխատանքի շրջանակում դեռևս հիմնականում քննարկվել են անցկացված հարցումների արդյունքները, հանձաժողովի կողմից որակի համակարգին առնչվող խնդիրներ դեռևս չեն վեր հանվել: Անցկացվել են հարցումներ ուսանողների, շրջանավարտների, դիմորդների, գործատուների շրջանում՝ կրթական ռեսուրսների, կրթական միջավայրի, տարբեր ստորաբաժանումների աշխատանքների, դասախոսների գնահատման վերաբերյալ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները բերել են ռեսուրսային բարելավման. ձեռք են բերվել համակարգիչներ, վերանորոգվել է մարզադահլիճը և այլն: Հարցումների իրականացմանը աջակում է նաև քոլեջի Ուսանողական խորհուրդը՝ ուսանողներին հարցումների մասին տեղեկացնելով և դրանց նպատակին ծանոթացնելով:

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների ընգրկվածությունը դրսևորվում է գործատուների արձագանքների դիտարկմամբ, որոնք իրականացվում են վերջիններիս հետ կազմակերպվող հանդիպումների շրջանակներում և պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվածութամբ: Քոլեջը հաշվի է առնում գործատուների կարծիքները կրթական ծրագրերում փոփոխություններ իրականացնելիս՝ տրվող հանձնարարականների և պրակտիկայի առանձնահատկությունները քննարկելով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գործատուները նախաձեռնողականություն են ցուցաբերում և հաճախ իրենց առաջարկներով հանդես են գալիս՝ օգտագործելով նաև քոլեջում զուգահեռաբար դասավանդելու հանգամանքը: Այդուհանդերձ, որակի ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ներդրված չէ հաստատությունում և չի ընդգրկում շահակիցների կարիքների ողջ շրջանակը: Ինչպես նաև համակարգի առջև դրված խնդիրները բավական ընդարձակ են (կրթական գործընթացների արդյունավետության մշտադիտարկում, ծրագրերի ինքնագնահատում և այլն) և պահանջում են լրացուցիչ ֆինանսական ու մարդկային ռեսուրսների ներգրավում:

Քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Ինչպես արդեն նշվել է, մինչև 2020թ. ԵՀԲՔ–ը չի ունեցել կրթության որակի ապահովման պատասխանատուի հաստիք, ուստի քոլեջում իրականացվող բարեփոխումները համակարգել են մեթոդիստը, պրակտիկայի բաժինը և մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուն: Մշակելով ԵՀԲՔ Որակի ներքին ապահովման վերանայման քաղաքականությունը՝ քոլեջը նախադրյալներ է ստեղծել որակի ապահովման քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման և հետագա բարելավման համար: Հաշվի առնելով գործընթացների իրականացման սկզբնական փուլում լինելը՝ դեռևս առկա չեն քաղաքականության և գործընթացների գնահատման որակական հետազոտություններ, վերլուծություններ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նպատակով ինքնավերլուծության իրականացման առաջին փորձառության հիմքում դրվել են քոլեջում գործող հաշվետվողականության մեխանիզմները: Տվյալները տրամադրվել են համապատասխան ստորաբաժանումների կողմից, այնուհետև ձևավորված վերլուծությունը քննարկվել է տարբեր հանդիպումների ժամանակ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա տվյալները համակարգված են, սակայն հիմնականում ներկայացվում են քանակական տեսքով: Կատարված ամփոփումները դեռևս չեն վերածվել խորքային և համապարփակ վերլուծությունների: Հարկ է նշել, որ ինքնավերլուծության գործընթացին հաջորդել է որոշակի ընթացակարգերի մշակումը և բացահայտված խնդիրների լուծման նպատակով մեխանիզմների կիրառումը: Փորձագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ նախատեսվում է ամբիոնների SWOT վերլուծությունները դարձնել պարբերական: Արդյունքների ամփոփումները ներկայացվում են մեթոդական քննարկումների, ամբիոնների նիստերի ժամանակ: Քոլեջի կայքը, որը արտաքին շահակիցների համար գործընթացների թափանցիկության ապահովման կարևորագույն գործիքներից մեկն է, դեռևս գործարկման և համալրման փուլում է ու չի արտացոլում իրականացվող գործընթացների ամբողջական պատկերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավար կազմը կարևորում է որակի ապահովման համակարգի ներդրումը, սակայն շահակիցների պատկերացումները և ակնկալիքները որակի ապահովման համակարգի վերաբերյալ դեռևս ամբողջական չեն, չկան որակի մշակույթի ձևավորման սահմանված հստակ չափանիշներ ու ցուցիչներ, որակի ապահովման համակարգի առջև դրված խնդիրները և առաջնահերթությունները հստակեցման կարիք ունեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում որակի մշակույթի ներդրման նպատակով ձևավորված փաստաթղթային հենքի բարելավումը, ինչը որոշակիորեն կանոնակարգում է համակարգի գործունեությունը, հիմքեր նախապատրաստում համակարգի հետագա զարգացման համար: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից որակի ապահովման քաղաքականության հստակեցումը, առավել թիրախային նպատակների, դրանց համապատասխան գործողությունների սահմանումը էականորեն կբարձրացնի իրականացվող գործընթացների արդյունավետությունը: Փորձագիտական խմբի համար նկատելի է քոլեջի ղեկավար կազմի կողմից որակի ապահովման համակարգի ձևավորմանն ուղղված աջակցությունն ու խրախուսումը, մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրումը, ստորաբաժանումների միջև կապերի առկայությունը, ինչը որոշակի հիմքեր է ստեղծել քոլեջում տվյալների մեկտեղման, կարիքների քննարկման համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջի որակի պատասխանատուն ունի պաշտոնի նկարագիր և աշխատանքային պլան, սակայն գործողությունների շրջանակը հաճախ չի բխում ՈԱ պատասխանատուի դերից, որը խոչընդոտում է որակի ապահովման համակարգի վերաբերյալ շահակիցների լիարժեք պատկերացումների հստակեցմանը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջը գտնվում է որակի համակարգի ներդրման դեռևս մեկնարկային փուլում՝ կիրառելով հիմնականում տարաբնույթ հարցումներն ու հաշվետվությունները, որոնք հանգեցնում են հաճախ ռեսուրսային որոշակի բարելավումների: Սակայն, դիտարկելով քոլեջի նախանշած ուղղությունները ու որակի ապահովման համակարգի դերը դրանց զարգացման գործում, փորձագիտական խումբը գտնում է, որ համակարգը դեռևս չի կարողացել հանգեցնել իր իսկ քաղաքականությամբ սահմանված նպատակների ձեռքբերմանը և նշաձողերի հաղթահարմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ կարիքների բացահայտման մեխանիզմների կատարելագործումը, շահակիցների մոտ կարիքների վերհանմանն ուղղված նախաձեռնողականության խթանումը հնարավորություն կստեղծի առավել խորքային վերլուծությունների իրականացման, քոլեջի բոլոր գործընթացների վերաբերյալ համապարփակ տվյալների հավաքագրման և այդ տվյալների հիման վրա կառավարչական որոշումների կայացման համար:

Քոլեջի բոլոր գործընթացների արդյունավետության մշտադիտարկման մեխանիզմները դեռևս անկատար են, ինչը ևս հետագայում կարող է խոչընդոտել համակարգի վերանայման և բարելավման գործընթացները:

Փորձագիտական խումբը նշում է, որ տվյալների հավաքագրման գործընթացի հստակեցումը, այդ գործընթացում շահակիցների դերի սահմանումը կնպաստեն քոլեջում բոլոր գործընթացների կայուն ու շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի մոտեցումները շահակիցների շրջանում իր գործընթացների մասին թափանցիկության ապահովման համար, սակայն համապատասխան էլեկտրոնային հարթակների, պաշտոնական կայքի թերկիրառումը լրացուցիչ խոչընդոտ է տեղեկատվության հասանելիության համար: Կայքի ամբողջական գործարկումը, քոլեջում ընթացող գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության

լիարժեք ներկայացումը ևս կնպաստեն թափանցիկության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի որակի ապահովման քաղաքականությամբ գլխավոր խնդիր է սահմանված իրականացվող գործընթացների գնահատման մեխանիզմների մշակումն ու ներդնումը, սակայն հստակեցված չէ որակի ապահովման համակարգի առաքելությունը և տեսլականը, հստակ չեն որակի ներքին համակարգի առջև դրված խնդիրները, տարեկան պլանավորումները դուրս չեն բերվում կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման և խնդիրների դուրս բերման հիման վրա, դեռևս ձևավորված չէ շահակիցների միասնական պատկերացումը որակի ապահովման համակարգի վերաբերյալ, որակի համակարգը չի դիտարկվում որպես գործընթացների բարելավման շարժիչ ուժ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՀԲՔ-ը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն*:* Փորձագիտական խումբը ԵՀԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Աննա Փոլադյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23 հունվարի, 2023 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աննա Փոլադյան՝ 1994 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը: 1994-96 թթ. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում եղել է փորձնակ-հետազոտող, նույն թվականին եղել է ավագ լաբորանտ: Այնուհետև 1996–1998 թթ. եղել է կրտսեր գիտաշխատող, 2000 թթ.-ին՝ գիտաշխատող, հետագայում նաև 2000-2018 թթ. ավագ գիտաշխատող: 2000 թ.-ից կենսաբանական գիտությունների թեկնածու է, իսկ 2021 թ.-ից՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, 2016-2017 թթ. ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում անհատ խորհրդատու, ապա 2021 թ-ից՝ կենտրոնի տնօրեն և Կենսաբանության գիատահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն: 2012 թ.-ից առ այսօր Երևանի պետական համալսարանում Կենսաբանության ֆակուլտետ, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում դոցենտ, իսկ 2021 թ-ից՝ սույն ամբիոնի վարիչ: Մասնակցել է փոխանակման ծրագրերի, մի շարք գիտաժողովների և աշխատել Վիրջինիայի (ԱՄՆ) և Բեռլինի Տեխնիկական (Գերմանիա) համալսարաններում որպես գիտաշխատող: Հեղինակ է մոտ 40 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների: Մասնակցել է մոտ 12 դրամաշնորհների: Պարգևատրվել է մի շարք պարգևներով:

Դավիթ Ղազարյան՝ 2003 թ.-ին ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը: Ստացել է բժշկի որակավորում: 2004 թ.-ին ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրան: 2007-2008 թթ. եղել է ԵՊԲՀ-ի ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի ավագ լաբորանտ: 2008-2014 թթ.-ին նույն ամբիոնում եղել է ասիստենտ: 2009-2010 թթ. Մյասնիկյանի պոլիկլինիկայում եղել է բժիշկ-ֆթիզիատր: 2010-2011 թթ. ԵՊԲՀ-ի արտասահմանցի ուսանողների ուսուցման դեկանատում զբաղեցրել է դեկանի տեղակալի պաշտոնը: 2013-2014 թթ. եղել է ԵՊՀ դեղագիտության ֆակուլտետի դասախոս: 2014 թ.-ից ԵՊԲՀ-ի ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի դասախոս է: 2011-2022 թթ. եղել է ԵՊԲՀ-ի ուսումնամեթոդական վարչության պրակտիկայի բաժնի պետ: 2022 թ.-ից ՀՀ Ան Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի որակի ապահովման բաժնի ղեկավարն է:

Լիլիթ Աբելյան՝ 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ.-ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ.-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:

Էդիտա Քասինյան՝ 2022թ.-ին ավարտել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ: 2022թ.-ից սովորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին, ինչպես նաև տարբեր դասընթացների և կամավորական աշխատանքների:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

14.11.2022 թ. - 17.11.2021 թ.

	14.11.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ԵՀԲՔ տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:00	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում շրջանավարտների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

	15.11.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում խորհրդի անդամների հետ	09:30	10:30	60 րոպե

2	Հանդիպում ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների և մեթոդիստի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների (10-12 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Ուսումնական մասի վարիչ, կարիերայի ուղորդման պատասխանատու, պրակտիկայի, կադրերի բաժիններ, գրադարանավար, հաշվապահ)	15:20	16:30	70 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:30	100 րոպե

	16.11.2022թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Զուգահեռ հանդիպումներ «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե

2	Զուգահեռ հանդիպումներ «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Զուգահեռ հանդիպումներ «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:20	15:00	40 րոպե
6	Բաց հանդիպում	15:10	16:10	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	19:00	150 րոպե

	17.11.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե

2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:50	12:50	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում ԵՀԲՔ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ ՌԾ-ի գնահատում	1
2.	ՌԾ պլան-ժամանակացույց	1
3.	Խորհրդի նիստերի արձանագրություններ	2
4.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ և հաշվետվություններ	2
5.	Ամբիոնի նիստերի արձանագրություններ	2
6.	Սկսնակ դասախոսների պատրաստման պլան	2
7.	Հարցումների վերլուծություններ, բարելավման պլաններ	2
8.	Պաշտոնի նկարագրեր	2
9.	Բյուջեի բացվածք	2
10.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ	3
11.	Դասալսումների մատյաններ	3
12.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ	3
13.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումներիմատյանը	3
14.	Ամբիոնների հաստիքացուցակ	3
15.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվներ	3
16.	Ամբիոնի դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	3
17.	Սեմինարների անցկացման արձանագրություններ	3
18.	Դասալսումների թերթիկներ կամ արդյունքների վերաբերյալ արձանագրություններ	3
19.	Կրթական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ փաստաթղթեր	3

20.	Կրթական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ արձանագրություններ	3
21.	Հարցաթերթիկների լրացված օրինակներ	4
22.	Առարկայական խմբակների աշխատանքային պլաններ	4
23.	Շրջանավարտների բազա	4
24.	Ուսանողների հետազոտական աշխատանքների օրինակներ	4
25.	Ուխ-ի արձանագրություններ	4
26.	Արձագանքների գիրք	4
27.	Վերապատրաստման փաթեթներ	5
28.	Պրակտիկայի ընթացքում արված հետազոտությունների օրինակներ	6
29.	Պրակտիկայի ծրագրեր	6
30.	ԵՀԲՔ-ի ուսանողների պրակտիկայի գնահատման չափանիշներ	6
31.	Վերջին տարիների տպված հոդվածների ցանկ	6
32.	Հին և նոր տպագրված ուսումնամեթոդական ձեռնարկներ	6
33.	Լաբորանտների աշխատանքային պլաններ	7
34.	Ուսանողական հարցաթերթիկներով հարցումների վերլուծական տվյալներ	7
35.	henaketayin@gmail.com-ի և ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով իրականացված հետադարձ կապի օրինակներով	8
36.	Կարիերայի պատասխանատուի աշխատանքային պլան	8
37.	Գրադարանի արձանագրությունների մատյան	8

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարաններ,
4. մարզադահլիճ,
5. դասախոսների հանգստի սենյակ,
6. «Քույրական գործի» հիմունքների լաբորատորիա,
7. անատոմիայի, ֆիզիոլոգիայի և գենետիկայի լաբորատորիա,
8. դեղաբանության լաբորատորիա,
9. անատոմիայի կաբինետ,
10. գինեկոլոգիայի նախակլինիկական կաբինետ,
11. մանկաբուժության կլինիկական կաբինետ,
12. վերակենդանացման և ինտերակտիվ թերապիայի կաբինետ,
13. նեղ մասնագիտական առարկաների կաբինետ,
14. աղետների բժշկության կաբինետ,
15. «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության սիմուլյացիոն կաբինետ,
16. անալիտիկ և դեղագործական քիմիայի լաբորատորիա,
17. անօրգանական և օրգանական քիմիայի լաբորատորիա,
18. դեղաձևերի տեխնոլոգիայի լաբորատորիա,
19. դեղաբանության լաբորատորիա,
20. դիգիենայի և էկոլոգիայի, մանրէաբանության լաբորատորիա,
21. բուժկետ,
22. միջոցառումների դահլիճ,
23. գրադարան,
24. ընթերցասրահ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ԵՀԲՔ - Երևանի հենակետային բժշկական քոլեջ

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ